Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

10269

# ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ЗКСМ2
2-21

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

24 SEP 2006
1 DEC 2009

ՀԱՄ. ԼԿԵՅՄ-Ի

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ
1931

04 JUN 2013

10269

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1695
ԳԼԱՎԼԻՏ 6545 (Բ)
ՊԱՏՎԵՐ 3304
ՏԻՐԱԺ 4000

1344-52

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԿ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ

(Ընդունված է միաձայն)

Համ. ԼԿՅԵՄ-ի IX համագումարը լսելով և քննության առնելով Խորհրդային Միության միջազգային և ներքին դրության մասին ընկ. Լ. Մ. Կագանովիչի զեկուցումը, պրոլետար և աշխատավոր յերիտասարդության միլիոնների անունից հայտարարում է լենինյան կոմյերիտմիության անկեղծ նվիրվածությունը կուսակցության այն գլխավոր գծին, վոր անց է կացնում նրա Կենտրոնական Կոմիտեն: Համագումարն ամբողջապես հավանություն է տալիս կուսակցության և նրա ԿԿ-ի քաղաքականությանն ու պրակտիկային, ուղղված դեպի այդ գծի անշեղ իրագործմանը:

Միմիայն Կենտկոմի կողմից կուսակցության լենինյան գիծն անշեղորեն իրականացնելու շնորհիվ է, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատն ու աշխատավորները վճռական հաջողություններ ձեռք բերին սոցիալիստական շինարարության մեջ: Ե՛լ ավելի ամրացավ ԽՍՀՄ-ի, վորպես աճող միջազգային պրոլետարական հեղափոխության պատվարի հզորությունը. յերկրի սոցիալիստական ինդուստրացման փրոնտում ձեռք են բերվել հսկայական նվաճումներ. գերակատարվել և հնգամյա-

կի առաջին յերկու տարվա պլանը. բարձրացել է յերկրի բանվորների և աշխատավոր մասսաների նյութական և կուլտուրական մակարդակը: Հիմնված կուսակցության կողմից լենինյան ճիշտ գծի կիրառման վրա՝ ձեռք է բերված գյուղի չքավոր-միջակային մասսաների շրջադարձը դեպի սոցիալիզմի ուղին, դեպի կոլտնտեսությունների ուղին, վորպիսի հանգամանքը թույլատրեց կուսակցությանը կուլակի շահագործողական տենդենցները ճնշելու և սահմանափակելու քաղաքականությունից անցնել կուլակության, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելուն՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Համագումարը հաստատում է, վոր կուսակցության XVI համագումարից հետո անցած կես տարին վկայում է սոցիալիստական շինարարության ամբողջ գործի հետագա, նոր և ե՛լ ավելի մեծ աճման ու առաջխաղացման մասին:

Լենինյան «ով-ում» հարցն արդյունաբերության մեջ արդեն լուծված է հօգուտ սոցիալիզմի և նույնպիսի հաջողությամբ լուծվում է հօգուտ սոցիալիզմի նաև գյուղատնտեսության բնագավառում: Սոցիալիստական սեկտորը գերակշռող տեղ է գրավել մեր եկոնոմիկայի մեջ: Յերկիրը մտել է սոցիալիզմի շրջանը: Շնորհիվ այս բոլոր հաջողությունների սոցիալիզմը հեռավոր պերսպեկտիվա լինելուց դարձել է այսօրվա պրակտիկայի խնդիր: Իսկ մեր յերկրի բանվորներին և գյուղացիների յերիտասարդ սերնդին ընկել է այդ սոցիալիզմը վերջնականապես իրագործելու պատիվը:

Համագումարը հաստատում է, վոր սոցիալիզմի այս համաշխարհային-պատմական նվաճումները կու-



սակցությունը ձեռք է բերել՝ միմիայն անհաշտորեն խորտակելով աջ ոպորտունիզմը՝ վորպես գլխավոր վտանգ տվյալ ետապում և «ձախ», կիսատրոցկիստական թեքումները, վորոնք ուժեղացնում եյին աջերի դիրքերը, նույնպես և ամեն տեսակ հաշտվողական և յերկերեսանի տարրերը կուսակցության, կոմյերիտմիության, մանավանդ պրոֆմիությունների և խորհուրդների մեջ: Իր կենտկոմի ղեկավարությամբ կուսակցությունը ջախջախիչ հակահարված տվեց Սիրցովի, Լոմինաձեյի, Շացկինի և մյուսների յերկերեսանի աջ-«ձախ» բլոկին, վորը աջ ոպորտունիզմի պլատֆորմայի վրա հանդես եր յեկել ընդդեմ կուսակցության գլխավոր գծի և նրա լենինյան ղեկավարության: Սնանկ դուրս յեկան նաև աջ տարրերը—կուլակության ձայն պահողները, ինչպես նաև տրոցկիստական ու կիսատրոցկիստական նվացողները, դասակարգային թշնամու ագենտները: Համագումարը վողջունում է կուսակցության և նրա ԿԿ-ի պայքարն ընդդեմ Բուխարինի, Ռիկովի, Տոմսկու և ուրիշների աջ-թեքումնավոր ֆրակցիայի, վորպիսին մինչև վերջը մերկացված և հարկադրված է անձնատուր լինել կուսակցության և ամբողջ բանվոր դասակարգի միահամուռ պահանջի առաջ:

Աջ և «ձախ» խմբակների ջախջախումը այնուամենայնիվ դեռևս չի թեթևացնում ոպորտունիզմի դեմ յերկու ֆրոնտի վրա պայքարելու խնդիրը:

Համագումարն ամենամեծ գոհունակությամբ նշում է, վոր յերկու ֆրոնտի վրա մղած այս անհաշտ պայքարի ամբողջ ընթացքում—պայքար ընդդեմ կուլակի գործակալ աջ ոպորտունիզմի՝ վորպես գլխավոր

վտանգի, նույնպես և ընդդեմ «ձախերի» և հաշտվողականների— Կոմյերիտմիությունը յեղել է, է՛ և կլինի կուսակցության ամենալավ և ամենավստահելի հենարանը:

Շարունակելով պայքարն աջ թեքման՝ վորպես գլխավոր վտանգի դեմ, անհրաժեշտ է միաժամանակ նկատի ունենալ, վոր շնորհիվ Կոմյերիտմիության ավելի լայն սոցիալական կազմի և կուսակցության համեմատությամբ նրա ունեցած ավելի քիչ կոփվածության, Համ. ԼԿԵԸՄ-ի օղակներում դեռևս կարող են յերևան գալ ռեցիդիվներ՝ վորպես աջ տրամադրություններ, նույնպես և մանավանդ ծայրայեղ «ձախության», ծայրայեղ «հեղափոխականության» (Շացկին—Ստենի տիպի), վորպիսիների դեմ պայքարելու համար լենինյան Կոմյերիտմիությունը կուսակցության ղեկավարությամբ պետք է շարունակ մոբիլիզացիայի յենթարկի յերիտասարդության ուշադրությունը:

Համ. ԼԿԵԸՄ-ի IX համագումարը Կոմյերիտմիության յերեք միլիոնանոց կազմակերպության անունից տալիս է իր հաստատ և անդրդվելի խոստումը առաջիկայում ևս լինել կուսակցության առաջին ոգնականը լենինյան գլխավոր գծի անաղարտության, ՀամԿ(բ)Կ-ի շարքերի միաձուլության և համախմբվածության համար մղվող անխնա պայքարում, ընդդեմ բոլոր ոպորտունիստական ցատկումների, ընդդեմ կուլակային ագենտուրայի ամեն տեսակ դուրս սողոսկումների, ընդդեմ հաշտվողականության ամեն տեսակ տարրերի:

Համ. ԼԿԵԸՄ-ի IX համագումարը նշում է, վոր սոցիալիստական շինարարության ժողովրդատնտեսության պլանը 1931 թ. համար, հնգամյակի յերրորդ



տարվա համար, հանդիսանում է ԽՍՀՄ-ի պրոլետարիատի և նրա կուսակցության նոր հաղթանակների պլան, հաղթանակներ, վոր ունեն համաշխարհային պատմական նշանակություն: Հնգամյակի յերրորդ, վճռական տարվա պլանի կատարումը պետք է ավարտի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը մեր յերկրում:

Այն հսկայական խնդիրները, վորոնք արտահայտություն են գտել ՀամԿ(բ)Կ-ի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենումի կողմից հաստատված հնգամյակի յերրորդ տարվա ժողովրդական տնտեսության պլանի մեջ և վորոնք լրացված են կուլտուրական շինարարության բնագավառին վերաբերող խոշորագույն խնդիրներով (ընդհանուր ուսուցում անցկացնելը, կադրերի լայն նախապատրաստումը, դպրոցների պոլիտեխնիկացիան և այլն), միաժամանակ հանդիսանում են նաև Կոմյերիտմիության առաջիկա տարվա աշխատանքի պլանը: Սոցիալիզմի շրջանը թևակոխելը, հնգամյակի յերրորդ տարին բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունների առաջ, վորոնց թվում նաև լենինյան Կոմյերիտմիության առաջ՝ դնում են ավելի բարձր, ավելի բարդ խնդիրներ, վորոնք պահանջում են տեմպերի ե՛լ ավելի ուժեղացում և աշխատանքի վորակի ե՛լ ավելի բարձր աստիճանի վերելք:

Լենինյան Կոմյերիտմիությունը, վոր հանդիսացել է սոցիալիստական մրցակցության և հարվածայնության զարգացման նախաձեռնողը, պարտավոր է կուսակցության ղեկավարությամբ առավել ևս լայն ծավալել հնգամյակը չորս տարում իրագործելու համար մղվող պայքարի փորձված զենքը—սոցիալիստական

մրցակցությունն ու հարվածայնությունը, բարձրացնել այդպիսին վորակական ավելի բարձր աստիճանի վրա, դրա ամենայնի զարգացնելով նրա այնպիսի ձևերը, ինչպիսին են՝ հասարակական բուքսիրները, պլանային խմբերը, հանդիպական արդֆինպլանները, և հարվածայնության ու սոցմրցակցության բազմամիլիոն շարժումն ուղղելով դեպի յերրորդ տարվա այնպիսի կարևոր խնդիրների լուծման կողմը, վորպիսին են՝ պլանայնությունը, ռացիոնալիզացիան, նոր տեխնիկայի յուրացումը և դրա հետ կապված՝ արտադրության վորակական ցուցանիշների համար տարվող պայքարը:

Համագումարը հավատացնում է կուսակցությանը և նրա լենինյան ԿԿ-ին, վոր հասնելով յերեսաները դեպի սոցիալիստական վերակառուցման խնդիրները շրջադարձին, դարձնելով աշխատանքի նոր կարգապահությունը, Կոմյերիտմիությունը կարող կլինի հնգամյակի յերրորդ տարում անչափ բարձրացնել իր տնտեսական աշխատանքի վորակը, հասցնելով այն ավելի բարձր աստիճանի, ուղղելով պրոլետարական և աշխատավոր յերիտասարդության ակտիվությունը դեպի ինդուստրիալիզացիայի մասնանշված վճռական լծակները տիրապետելու կողմը (պլանավորում, ռացիոնալիզացիա, նոր տեխնիկայի յուրացում), և առաջին հերթին սոցիալիստական կառուցվածքի այնպիսի մարտական, հանգուցային բնագավառները տիրապետելու կողմը, վորպիսին են՝ տրանսպորտը, ածուխը, մետաղը, նոր կառուցվածքները, ելեկտրոֆիկացիան, անասնաբուծությունը, բանվորական մատակարարումը և կոոպերացիայի աշխատանքը:



Համագումարը բացառիկ նշանակություն է տալիս Կոմյերիտմիության մասնակցությանը կադրերի պրոբլեմի լուծման մեջ: Կոմյերիտմիությունը, վոր հանդիսանում է վորպես ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորի և խորհրդային ապարատի համար նոր կադրեր կոփելու կարևորագույն աղբյուր, պարտավոր է կադրեր պատրաստելու աշխատանքը դարձնել իր առանցքային և կենտրոնական խնդիրը, ամենայեռանդուն մասնակցություն ցույց տալով կադրերի պատրաստման բոլոր ողակների աշխատանքի կազմակերպման մեջ (Փաբգործուսներ, կարճատև դասընթացներ, տեխնիկումներ, ԲՈՒՀ-եր և այլն):

IX համագումարը լիակատար հաշիվ է տալիս իրեն այն մասին, վոր յերրորդ տարվա պլանների իրագործումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Լենինյան Կոմյերիտմիությունը շատ լավ է հասկանում այդ դժվարությունների բնույթը, վորոնք հանդիսանում են վորպես աճման դժվարություններ և վորոնք իրենց հիմքում ունեն ամենից առաջ դասակարգային թշնամու կատաղի դիմադրությունը յերկրի ներսում և դրսում: Համ. ԼԿՅԵՄ-ն գտնում է, վոր դժվարությունները արմատապես հաղթահարելու միակ ուղին — դա կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակման և օպորտունիստների դեմ յերկու ֆրոնտի վրա անողոք պայքարի ուղին է, առաջին հերթին աջերի դեմ, վորոնք փորձում են կուսակցությանն ու Կոմյերիտմիությանը քաշել դեպի դժվարությունների հանդեպ անձնատուր լինելու ուղին:

Պրոլետարական պետության հաջողությունները

ուժեղացնում են՝ դրսից—իմպերիալիստական օղակման և ներսից—դասակարգային թշնամու, առաջին հերթին կուլակության ատելությունն ու կատաղությունը: Խորհրդային Միության դեմ ինտերվենցիա նախապատրաստելու միջազգային իմպերիալիզմի կողմից արվող յեռանդուն միջոցառումները, վորոնք յերկրի ներսում հենվում են կատաղի կերպով դիմադրող կուլակության և բուրժուական մասնագետների վերնախավի վնասարար մասի ուժերի վրա, ամբողջ բանվոր դասակարգից և յերիտասարդությունից պահանջում են հատուկ աչալրջություն և պատրաստականություն:

Համագումարն ամբողջապես ու լրիվ կերպով հավանություն է տալիս կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությանը—խաղաղության քաղաքականությանը: Համագումարն անհրաժեշտ է համարում ըստ ամենայնի ամրացնել ԽՍՀՄ-ի պաշտպանունակությունը: Համագումարը հանձնարարում է Համ. ԼԿՑԵՄ-ի ԿԿ-ին ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցառումները լայնորեն մասնակից անելու Կոմյերիտմությանը ԽՍՀՄ-ի պաշտպանության գործին և հատկապես Բանվորա-գյուղացիական փառապանծ Կարմիր Բանակին և ծովային ու օդային Կարմիր տորմիղին օգնելու գործին: Համագումարն անհնարին է համարում Համ. ԼԿՑԵՄ-ի շարքերում այնպիսի անձանց գոյությունը, վորոնք թերագնահատում են ռազմական վտանգը, չեն կիրառում ռազմական կրթությունը, չեն նախապատրաստվում վերահաս կռիվների համար:

Կոչ անելով աշխարհի ամբողջ աշխատավոր յերիտասարդությանը՝ Կոմինտերնի և Կոմյերիտինտերնի ղեկավարությամբ վճռողական պայքար մղել ընդդեմ պատերազմի, ԽՍՀՄ-ի պաշտպանության համար, համագումարը ԽՍՀՄ-ի աշխատավոր յերիտասարդության միլիոնների անունից հայտարարում է, վոր Խորհրդային Միության Կոմյերիտմիությունն ու նրա ղեկավարության տակ գտնվող յերիտասարդությունն իմպերիալիզմի դեմ մղվող այդ պայքարում կլինեն սոցիալիզմի և համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար մարտնչող անձնազոհ մարտիկների առաջին շարքերում:

Կոմյերիտմիության IX համագումարը գոհունակությամբ նշում է, վոր XVI կուս. համագումարից հետո անցած այս կես տարին ամբողջապես և լրիվ կերպով հաստատեց միջազգային դրության մասին համագումարի բանաձևում և Կոմինտերնի վորոշումների մեջ տրված գնահատականի ճշտությունը: Անցած ժամանակաշրջանը հատկապես սուր կերպով ընդգծեց ԽՍՀՄ-ի աճող սոցիալիստական սիստեմի և հակասություններով ու հետզհետե ուժեղացող ճգնաժամերով փտող կապիտալիստական սիստեմի միջև յեղած արմատական տարբերությունը:

Մեզանում — արդյունաբերության և գյուղատնտեսության աննախընթաց վերելք, իսկ նրանցում — արտադրության ծայրագույն անկում: Մեզանում — գործազրկության լիկվիդացիա, իսկ նրանցում — գործազուրկների նորանոր միլիոններ բոլոր յերկրներում: Մեզանում — բանվոր դասակարգի բարեկեցության աճում, իսկ նրանցում— ձեռնարկուների ծայրագույն հարձակում աշխատավարձի տվյալ մակարդակի վրա,

րկանումներ, բանվորական թերի չարաժ, բանվորական յերկարացված որ:

Համաշխարհային ճգնաժամը գլխովին ջախջախեց «կազմակերպված կապիտալիզմի» մասին սոցիալ – դավաճանների և նրանց աջ օպորտունիստական փոխասացների կառուցած թեորետիկական շենքը: Գաղութային և կիսագաղութային յերկրների բանվոր դասակարգի և ճնշված ժողովուրդների մեջ տնտեսական ճգնաժամն առաջ է բերում հեղափոխական ակտիվության վերելքը և մի շարք յերկրներում վերաճում է քաղաքական ճգնաժամը: IX համագումարը հատուկ գոհունակությամբ է նշում Կոմինտերնի, ՀամԿ(բ)Կ-ի և նրա ԿԿ-ի տարած գծի լենինյան հետևողականությունն ու ճշտությունը՝ միջազգային հեղափոխական շարժման ամրապնդման ու զարգացման գործում և ամբողջապես սատարում է Կոմինտերնի մղած պայքարին ընդդեմ օպորտունիզմի՝ յերկու ֆրոնտի վրա:

Հասունանում են դասակարգային նոր խոշոր գուպարածներ: Բոլշևիկյան կուսակցության լենինյան ղեկավարության տակ մեր յերկրի պրոլետարիատն ու աշխատավոր մասսաները համառ աշխատանքով հընգամյակի դիրքերի վրա ամրապնդում են համաշխարհային պրոլետարական գալիք հեղափոխության ֆրոնտը:

Կոմյերիտմիությունն ու նրա ղեկավարության տակ գտնվող բանվորների ու գյուղացիների յերիտասարդությունը յեղել են, կան և կլինեն կուսակցության հավատարիմ օգնականներ, նրա հերոսական պայքարի անկեղծ զինակիցներ, նրա լենինյան գծի հետևողական կիրառողներ, դասակարգային թշնամու և նրա օպոր-



տունիստական ագենտուրայի դեմ անհաշտ մարտիկներ:

Թո՛ղ տապալվեն պրոլետարիատի թշնամիները, որոնց դեմ կանգնած են աճող և հաղթանակող սոցիալիզմի բազմամիլիոն բանակները:

Թո՛ղ ավելի բարձր ծածանվեն Լենինի կուսակցության ու դրոշներն ամբողջ աշխարհում:

Կեցցե՛ բոլշևիկների կուսակցությունը, վոր առաջնորդում է մեր յերկրի բանվոր դասակարգին հաղթանակից հաղթանակ, ընդառաջելու գալիք համաշխարհային հոկտեմբերին:

Կեցցե՛ ՀամԿ(բ)Կ-ի լենինյան ԿԿ-ն — սոցիալիզմի հաղթանակների կազմակերպողը:

Կեցցե՛ փորձված, անհողդողդ բոլշևիկը, Կոմյերիտմիության և կուսակցության ամենալավ ղեկավարըն ու առաջնորդը — ընկ. Ստալինը:

## ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի ԿԿ-Ի ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված է միաձայն)

Համ. ԼԿՅԵՄ IX համագումարը լսելով և քննության առնելով Համ. ԼԿՅԵՄ-ի ԿԿ-ի զեկուցումը, գըտնում է ԿԿ-ի վարած քաղաքական գիծը ամբողջապես և լրիվ կերպով ճիշտ և հավանություն է տալիս նրա աշխատանքին:

ՀամԿ(բ)Կ-ի ԿԿ-ի ղեկավարությամբ Համ. ԼԿՅԵՄ-ի ԿԿ-ն ապահովել է կուսակցության լենինյան գծի հատուկ կենսագործումը և հաջողությամբ մոբիլիզացիայի յե յենթարկել Համ. ԼԿՅԵՄ-ի հոծ մասսաներին և Կոմյերիտմիության ղեկավարությամբ անկու-

տակցական յերկրագործության՝ գործնականորեն իրագործելու համար կուսակցության գլխավոր գիծը, անհաշտորեն պայքարելով յերկու ֆրոնտի վրա, ընդդեմ ոպորտունիզմի ամեն տեսակի արտահայտությունների — ընդդեմ աջ թեքման՝ վորպես գլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» ոպորտունիզմի, յերկերեսանիության և նրանց հանդեպ հաշտվողական վերաբերմունքի:

Համագումարը գոհունակությամբ հաստատում է, վոր շնորհիվ Համ. ԼԿՑԵՄ-ի ԿԿ-ի այդ սկզբունքորեն զուսպ գծի, Կոմյերիտմիությունն իր IX համագումարին յեկավ միաձույլ և համախմբված՝ վորպես գաղափարական — քաղաքական, նույնպես և կազմակերպչական տեսակետից՝ կուսակցության և ընկ. Ստալինի գլխավորությամբ այդ կուսակցության ղեկավարության շուրջը:

Համ. ԼԿՑԵՄ-ի VIII համագումարից հետո անցած յերկու և կես տարիները նշանակալից են դարձել մեր յերկրի բանվոր դասակարգի նոր վճռական հաղթանակներով՝ կուսակցության ղեկավարությամբ, վորը առաջ է քաշել և հաջողությամբ իրագործել հնգամյակը չորս տարում, իսկ արդյունաբերության հիմնական վճռողական ճյուղերում նաև յերեք տարում կատարելը:

ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարությունը ծավալվում էր համաշխարհային տնտեսական ավելի և ավելի խորացող ու զարգացող ճգնաժամի ֆոնի վրա, մի ճգնաժամ, վորը կապիտալիզմի բոլոր հակասությունների հսկայական սրվածություն էր առաջացնում և մի շարք յերկրներում վերածվում էր քաղաքական ճգնաժամի:



Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի հաջողությունները, վորոնք գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման համար հաստատուն բազա եյին ստեղծել, և գյուղացիության հիմնական մասսայի վճռական շրջադարձը դեպի սոցիալիստական ուղին — կուսակցության համար ապահովեցին կուլակին սեղահան անելու և սահմանափակելու քաղաքականությունից անցնել համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությանը:

«Մենք թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը, քանի վոր սոցիալիստական սեկտորն այժմ իր ձեռքումն է պահում՝ ամբողջ ժողովրդական տնտեսության բոլոր տնտեսական լծակները, թեև մինչև սոցիալիստական հասարակության կառուցումը և դասակարգային տարբերությունների վոչնչացումը դեռ շատ կա» (Ստալին):

Բոլոր այս հաջողությունները ձեռք են բերված շնորհիվ կուսակցության գլխավոր գծի հաստատուն հետևողական կերպով անցկացնելուն, ՀամԿ(բ)Կ-ի ԿԿ-ի լենինյան ղեկավարության տակ, յերկու ֆրոնտի վրա մղած վճռական և անհաշտ պայքարի ընթացքում:

Ամբողջ ֆրոնտով ծավալված սոցիալիստական հարձակումը առաջ բերեց դասակարգային թշնամու առավել ևս կատաղի դիմադրություն:

Առաջիկա ժամանակաշրջանում Համ. ԼԿՑԵՄ-ի աշխատանքի վճռական խնդիրն է հանդիսանում մոբիլիզացիայի յենթարկել Կոմյերիտմիության և նրա դե-

կավարության տակ գտնված անկուսակցական յերի-տասարդության ամբողջ եներգիան ու կամքը՝ կատարելու հնգամյակը չորս տարում, ի կատար ածելու ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը 1931 թվին, վերջնականապես ճնշելու դասակարգային թշնամու պրոլետարիատին թշնամական ուժերի դիմադրությունները:

***

VIII համագումարից մինչև IX համագումարը Համ. ԼԿՅԵՄ-ի զարգացումն անցել է՝ Համ. ԼԿՅԵՄ-ի քաղաքական աճման, կուսակցական գծի անաղարտության համար մղած պայքարի, յերկրի սոցիալիստական վերափոխման մեջ Կոմյերիտմիության տեսակարար կշռի բարձրացման, ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի կատարման նշանաբանի տակ: Իրագործելով իր աշխատանքի վերակառուցումը ռեկոնստրուկտիվ շրջանի պահանջների համեմատ, Կոմյերիտմիությունը կուսակցության ղեկավարության տակ ծավալել բանվոր յերիտասարդության մասսայական շարժումը սոցիալիստական մրցակցության և հարվածայնության կազմակերպման համար, որը վերաճել է համապրոլետարական շարժման, որպիսի շարժումը դաստիարակում է նոր կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը և դառնում է սոցիալիզմի շինարարության կոմունիստական մեթոդ: Տնտեսական շինարարության հարցերը Համ. ԼԿՅԵՄ-ի աշխատանքի մեջ դարձել են կենտրոնական հարցեր: Կոմյերիտմիությունը հիմնականում յերեսը դարձրել է դեպի այն խնդիրների իրագործումը, որպիսիներն առաջադրել



է վերակառուցողական շրջանը: Միանգամայն ապորտունիստական են «միության ճգնաժամի», «Կոմյերիտմիության ակտիվության անկման» և այլ նման բաների մասին յեղած պնդումները: Համագումարը նմանապես դատապարտում է նաև գոյություն ունեցող անհատ ապորտունիստական պնդումները Կոմյերիտմիության իբր թե «նոր յետամնացության» մասին, որն իբր թե բխում է «կուսակցության գլխավոր գիծը իրականացնելու խնդրում կուսակցության կողմից Կոմյերիտմիության վրա դրված խնդիրների նրա ուժերին անհամապատասխան լինելուց»: Այսպիսի հեռավությունները հանդիսանում են ապորտունիստական պանիկայի, կուսակցության գլխավոր գծի և միության զարգացման անցկացած ետապի անհասկացողության, Համ. ԼԿՅԵՄ-ի հետագա խնդիրները վորոշելու քաղաքական անճարակության հետևանքներ:

***

Համ. ԼԿՅԵՄ-ի շարքերի դասակարգային մաքրունակության բարձրացումը, նրա քաղաքական աճումը ձեռք են բերված շնորհիվ կուս. ղեկավարության ճշտության և յերկու ֆրոնտի վրա մղած վճռական պայքարի:

Կուսակցական գծից աջ—«ձախ» թեքումները Կոմյերիտմիության մեջ ունեն իրենց սպեցիֆիկ առանձնահատկությունները: Համագումարը գոհունակությամբ նշում է ԿԿ-ի վճռական պայքարը «Կոմյերիտմիության մեջ յերիտասարդ կուլակի վերադաստիարակման» աջ ապորտունիստական թեորիայի դեմ:

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ—ССРА им. А. Мясникяна
1344-ՅՂ

«Կոմյերիտմիության մեջ կուլակի վերադաստիարակման» թեորիան, վոր առաջ է յեկել «սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման» օպորտունիստական թեորիայից, տանում է դեպի միության մագնիտատումը, դեպի նրա դասակարգային մարտունակության իջեցումը, դեպի բատրակի, կոլտնտեսականի և չքավորության դերի մոռացության տալը:

Համագումարը հավանություն է տալիս ԿԿ-ի հաստատուն գծին «ձախերի» հետ (Շացկին, Ստեն) ունեցած պայքարում, վորոնք փորձում են Կոմյերիտմիությունը հակադրել կուսակցությանը:

Հավանություն տալով Համ. ԼԿՅԵՄ-ի ԿԿ-ի ձեռք առած վճռական միջոցներին՝ ուղղելու «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի խմբագրության հին կազմի գիծը, համագումարը «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի խմբագրության նոր կազմի գիծը համարում է ճիշտ:

Կուսակցության գծի հստակ անցկացման համար մղված պայքարը, յերկու ֆրոնտի պայքարը առաջիկայում ևս հանդիսանում է Կոմյերիտմիության գլխավոր խնդիրը:

Վերջնականապես ջախջախելով կիսատրոցկիստական ռեցիդիվները, «ձախական» արտահայտությունները, անխնա մերկացնելով նրանց կեղծ «ձախական» ֆրազեոլոգիայի տակ թաքնված աջերին օգնող մանրբուրժուական բովանդակությունը, անհրաժեշտ է առաջիկայում ևս վճռական պայքար մղել կուլակային ագենտուրայի դեմ կուսակցության և Կոմյերիտմիության մեջ, — գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեքման դեմ, նույնպես և յերկերեսանիության և դեպի օ-



պորտունիզմի ամեն տեսակի արտահայտությունները ցուցաբերող հաշտվողականության դեմ:

***

Կուսակցության XVI համագումարի վորոշումները և բոլոր ֆրոնտներում պրոլետարիատի կողմից ծավալուն սոցիալիստական հարձակման անցնելը Համ. ԼԿՅԵՄ-ի առաջ դնում են մի շարք նոր, վորակով ավելի բարձր խնդիրներ: Համ. ԼԿՅԵՄ-ի հետագա գործունեությունը կընթանա այնպիսի պայմաններում, յերբ յերկիրը անցնում է ՆԵՊ-ի վերջին ետապը և մտնում է սոցիալիզմի շրջանը: Զարգացման այս նոր ետապում Համ. ԼԿՅԵՄ-ի կենտրոնական պրոբլեմն է հանդիսանում՝ սոցիալիզմի շինարարության վերաբերյալ կուսակցության դրած խնդիրների ավելի լայն ընդգըրկումը Կոմյերիտմիության կողմից:

Այս հանգամանքը պահանջում է Համ. ԼԿՅԵՄ-ի նշանակալից չափով առավել ևս ուժեղ մասնակցությունը սոցիալիզմի շինարարության կոնկրետ խնդիրների վորոշման մեջ, հնգամյակը չորս տարում կատարելու համար մղված պայքարի հանգուցային մասերում, յերիտասարդության ուժերի և ստեղծագործական ենէրգիայի մոբիլիզացիա՝ հաղթահարելու համար ժողովրդական տնտեսության այնպիսի նեղ տեղերը, ինչպիսին են — տրանսպորտը, նոր շինարարությունը, ենէրգետիկան (մանավանդ ածուխը) և սև մետալուրգիան:

Միությունը պարտավոր է ե՛լ ավելի լայն և ակտիվորեն ծավալել իր մասնակցությունը խորհրդային շինարարության մեջ, ռացիոնալիզացիայի պլանավորման մեջ և նոր տեխնիկայի յուրացման մեջ:

Կոմյերիտմիության տնտեսական խնդիրների կենտրոնում համագումարը դնում է Համ. ԼԿՅԵՄ-ի ոգնությունը կուսակցությանը՝ լուծելու Ուրալ — Կուզնեցկի պրոբլեմները, Բոբրիկովսկի, Բերեզնյակովսկի, Մագնիտոգորսկի, Չելյաբինսկի, Խարկովի շինարարությունները:

Կոմյերիտմիության կարեվորագույն խնդիրն է հանդիսանում՝ պայքարել արդյունաբերության հումքի բազայի ընդլայնման համար — զանազան տեխնիկական կուլտուրաների ցանքերի ամենալայն ծավալման հիման վրա, մանավանդ բամբակի, վուշի, կաուչուկային բույսերի, ճակնդեղի և այլն: Կոմյերիտմիությունը պարտավոր է իր վրա վերցնել այդ կուլտուրաների հավաքի և մշակման օրինակելի դըրվածքի նախաձեռնությունը, հատկապես կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում:

Հիմնական օղակները, վորոնցից բռնելով Կոմյերիտմիությունը կարող է կազմակերպել անցումը դեպի այդ վորակապես ավելի բարձր խնդիրների լուծումը, հանդիսանում է պայքարը բոլշեվիկական տեմպերի մասսայականության, աշխատանքի գործունության և վորակի համար:

«Մենք մեր կազմակերպչական աշխատանքն այնպես պետք դնենք, վորպեսզի այդ աշխատանքը ամրապնդի քաղաքականությունը, վորպեսզի այդ աշխատանքը կյանքի մեջ անցկացնի այն դիրեկտիվները, վոր մենք ենք տալիս» (Կագանովիչ):

Նոր, վորակապես ավելի բարձր խնդիրներն առավել ևս բարձրագույն պահանջներ են դնում խորհրդային ղեկավարության առաջ:



Անհրաժեշտ է ղեկավարության հետագա վերակառուցումը գործառնության հիման վրա, վորը կարողանա միացնել մեծ գաղափարական – քաղաքական թափը յերիտասարդության մասսաների՝ առանձին կոնկրետ խնդիրներն իրականացնելու համար կազմակերպելու ունակության հետ:

Տեմպերի և վորակի համար պայքարն անիմաստ է, առանց միության մեջ կատարման ստուգողական հարցերի վճռական դրվածքի:

«Պետք է յուրացնել, վոր ներկայումս վճռողականն է հանդիսանում՝ բոլոր մեր վորոշումների պրակտիկ իրագործման աշխատանքը վերից մինչև վար կազմակերպել կարենալը» (Կագանովիչ):

Անհրաժեշտ է ամենաանխնա պայքար մղել ընդդեմ մանր-բուրժուական յերևույթների, կազմակերպվածության, դիսցիպլինայի կատարման ամենորյա ստուգումների համար, վորովհետև դա հանդիսանում է վորպես բանալի տիրապետելու բոլշեվիկյան տեմպերին և աշխատանքի վորակի բարձրացմանը, վորովհետև դա հանդիսանում է վորպես մեթոդ միության մասսաներին ճիշտ բոլշեվիկյան կրթություն տալու համար:

***

Սոցիալիստական մրցակցությունն ավելի բարձր աստիճանի վրա փոխադրելը պետք կայանա նրանում, վոր սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունն ընդգրկեն ինդուստրացման այնպիսի կարեվորագույն լծակներ, ինչպիսին են պլանայնությունը, ռացիոնալիզացիան և նոր տեխնիկային տիրապետելը, հարվածայիններին լայն կերպով մասնակից դարձնելը

տնտեսական և համապետական աշխատանքի ղեկավարման գործին։

Նշելով կոմյերիտականների կողմից սոցմրցակցությունն ու հարվածայնությունը հարյուր տոկոսով ընդգրկելու լոզունգի չկատարելը, Համագումարը՝ վորպես կարևորագույն խնդիր դնում է կոմյերիտականների կողմից սոցմրցակցությունն ու հարվածայնությունը մոտակա ժամանակում գլխովին ընդգրկելու անհրաժեշտությունը։

Դրա հետ մեկտեղ կոմյերիտմիությունը պարտավոր է ավելի լայն կերպով ներգրավել կոմյերիտականների և բանվոր յերիտասարդության մասսաները պրոֆմիությունների աշխատանքի մեջ։ «Ներկայումս կոմյերիտմիության խնդիրը պրոֆմիությունների մեջ կայանում է նրանում, վորպեսզի պրոֆմիությունների աշխատանքի վերակառուցման և բարելավման մեջ կոմյերիտմիությունը գրավի ավելի առաջավոր դիրքեր» (Կագանովիչ)։

Նշելով գյուղական կոմյերիտմիության աճումը, նրա հասարակական-քաղաքական նշանակության, դասակարգային մարտունակության բարձրացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների լուծման մեջ նրա տեսակարար կշռի մեծացումը, Կոմյերիտմիության մեջ կոլտնտեսականների աճումը, Համագումարը դրա հետ մեկտեղ ամբողջ գյուղական կազմակերպության առաջ դնում է մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ գյուղատնտեսության կոլեկտիվացման մեջ ավելի լայն և ակտիվ մասնակցելը, կոմյերիտականներին կոլտնտեսությունների մեջ լրիվ կերպով ներգրավելը, կոլտնտեսական շինարարության



կազմակերպչական-տնտեսական հարցերին ուշադրություն դարձնելը, խորհտնտեսությունների ամրապնդումը, հատկապես կոլտնտեսությունների ներքին ամրապնդումը։ Գյուղի կոմյերիտմիության հիմնական և կարևորագույն խնդիրներն են հանդիսանում—կոլտնտեսական շարժման կազմակերպիչների և ղեկավարների նոր հարյուրներ և հազարներ առաջքաշելն ու նախապատրաստելը, ինչպես նաև աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսության մեջ և նրա տնտեսության պլանավորումը։ Կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունները պարտավոր են հատուկ ուշադրություն դարձնել անասնաբուծության պրոբլեմի լուծման վրա, ոգնելով կուսակցությանն ու խորհրդային իշխանության մարմիններին ծավալել և ամրապնդել անասնաբուծական խորհտնտեսությունների զանազան տեսակները։

Հավաստելով ԿԿ-ի գծի ճշտությունն աճման խնդիրներում, Համագումարն այնուամենայնիվ անբավարար է համարում միության կողմից բանվոր յերիտասարդությանն ընդգրկելու աստիճանը։ Անհրաժեշտ է վճռական պայքար հայտարարել կոմյերիտմիության աճման խնդրում ինքնահոսի մանրվելու ոպորտունիստական դրվածքին, առաջադրելով մարտական, կոնկրետ խնդիր՝ ամենամոտ ժամանակում փոխակերպելու ՀԱՄ․ ԼԿՑԵՄ-ը մի բազմամիլիոն կազմակերպության։ Այս խնդրի լուծումը պահանջում է վճռական, բոլշևիկյան արագացում իրագործելու «Հարյուր տոկոսով բանվորական յերիտասարդությանն ընդգրկել Կոմյերիտմիության մեջ» լոզունգը։

Համագումարն ընդգծում է, վոր Կոմյերիտմիության

կառուցման ներկա շրջանում Համ. ԼԿՅԵՄ-ի անդամների մասսաների թեորետիկական մակարդակի բարձրացումը հանդիսանում է՝ վորպես վճռական պայմաններից մեկը—ամրապնդելու հիմնականում յերեսներս դեպի անտեսական շինարարությունը ձեռք բերած շրջադարձը և բարձրացնելու միության աշխատանքն ավելի բարձր աստիճանի:

Համ. ԼԿՅԵՄ-ի հետագա ամբողջ աշխատանքը պիտի ընթանա ավելի ու ավելի ուժեղացող և սրվող դասակարգային պայքարի պայմաններում, վորոնց թվում նաև յերիտասարդության համար մղվող պայքարի պայմաններում: Համ. ԼԿՅԵՄ-ը պետք է ուժեղացնի իր աշխատանքը հակակրոնական պրոպագանդայի բնագավառում, ընդդեմ զանազան կրոնական աղանդների, զինելով կոմյերիտականներին և յերիտասարդությանը մարքսիստական-լենինյան գիտելիքներով:

Սոցիալիստական շինարարության հաջողությունները ապահովեցին բանվոր դասակարգի և աշխատավորության, վորոնց թվում նաև յերիտասարդության նյութական և կուլտուրական բարեկեցության աճումը: Սա ձեռք է բերվել միմիայն շնորհիվ բանվորական յերիտասարդությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու համար մղած վճռական պայքարի՝ հարվածայնության և սոցիալիստական մրցակցության հիման վրա: Սոցիալիզմի առաջին շրջանը թևակոխելը այլ կերպ է դնում բանվոր յերիտասարդության աշխատանքի և անտեսական շահերի պաշտպանության հարցերը: Բանվոր յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանության հարցերը վերածվում են արտադրու-



թյան մեջ դեռահասների բրոնիայի սահմանման խընդիրը և անցնում են դեռահասներին կադրերի նախապատրաստության բոլոր ձևերի մեջ, սկսած ֆաբզավուծուսներից մինչև բուհերը, ներգրավելու պլանային կազմակերպության խնդրին: ԱԿԻ-ի վորակյալ բանվորական ուժերի սուր պակասության պայմաններում այլ կերպ են դրվում ֆաբզավուծուսների և ԱԿԻ-ի հարցերը: Ըստ XVI-րդ կուսհամագումարի վորոշումների ֆաբզավուծուսը ճանաչված է վորպես յերիտասարդներից վորակյալ բանվորական ուժեր նախապատրաստելու հիմնական ձև: Համագումարը դատապարտում է ԱԿԻ-ի ժխտման նըկատված փորձերը, վորպիսի հանգամանքը կուսակցության XVI-րդ համագումարի վորոշումներին հակառակ է գնում: Տվյալ ետապում վորակյալ բանվորական ուժեր պատրաստելու կարճատև ձևերը և ֆաբզավուծուսների դպրոցները պետք է գոյություն ունենան:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է վճռական պայքար ծավալել այն ոպորտունիստական տարրերի դեմ, վորոնք չեն հասկանում ֆաբզավուծուսների վիթխարի նշանակությունը և նրանց ունեցած դերը վորակյալ բանվորական կադրեր պատրաստելու գործում, վորոնք դնում են ֆաբզավուծուսների կրճատման հարցը: Այդ փորձերը ֆաբզավուծուսների դեմ մղվող պայքարի ծպտյալ արտահայտություններ են, փորձեր են կուսակցության XVI-րդ համագումարի վորոշումները ֆաբզավուծուսների մասին անտեսելու և փոխարինելու ֆաբզավուծուսները դեռահասներից վորակյալ բանվորական ուժեր պատրաստելու կարճատև ձևերով:

Համագումարը՝ վորպես գործնական խնդիր դնում է դեռահաս սերնդի և առաջին հերթին բանվոր յերիտա-

ոսրդության ընդհանուր պոլիտեխնիկական կրթության համար պայքարելու խնդիրը: Դասակարգային պայքարի սրումը բոլոր ֆրոնտներում, որոնց թվում նաև իդեոլոգիական ֆրոնտում, որ արտահայտվում է մանրբուրժուական, աջ-օպորտունիստական, ձախական, ազգային-շովինիստական ուղղություններով գեղարվեստի, գրականության և այլ բնագավառներում, նույնպես և կրոնական և մանավանդ աղանդավորական շարժման առկայությունը միության առաջ ամենայն սրությամբ խնդիր են դնում վճռականապես ուժեղացնել պայքարը հօգուտ բանվորական և աշխատավոր յերիտասարդության լայն մասսաների: Համագումարը պարտավորեցնում է միության բոլոր կազմակերպություններին այնպիսի տեմպերով զարգացնել ընդհանուր կրթության վերաբերմամբ շեֆական պարտականությունները կատարելու աշխատանքը, որպեսզի ամենամոտ տարիներում ի կատար ածվի ընդհանուր կրթություն մտցնելու և յերիտասարդության ու հասակավորների անգրագիտության կատարյալ լիկվիդացիայի խնդիրը:

Համագումարը յենթադրում է, որ ֆիզկուլտուրական շարժումը ամենամոտ ժամանակաշրջանում պետք է ընդգրկի բանվորների և բանվորական յերիտասարդության լայն մասսաներին: Ֆիզկուլտուրական աշխատանքի մեթոդները մաքսիմալ չափով պետք է օգտագործվեն՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման և յերկրի պաշտպանունակության ամրապնդման խնդիրներին աջակցություն ցույց տալու նպատակով:

Համագումարը հանձնարարում է ԿԿ-ին ձգտել՝ մտցնելու ֆիզկուլտուրան արտադրական պրոցեսի և նոր բանվորական կադրեր պատրաստելու ամբողջ սիս-



տեմի մեջ, իսկ Լուսժողկոմատի գծով՝ մտցնելու բոլոր յերեխաների և դեռահասների ընդհանուր ֆիզիկական պատրաստություն: Համագումարը գտնում է, որ կոմյերիտմիության ռազմական աշխատանքի թափն ու բովանդակությունը չի համապատասխանում յերկրի պաշտպանության ժամանակակից պահանջներին և Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի տեխնիկական նոր սպառազինությանը և պահանջում է անհապաղ իրագործել կոմյերիտականների ընդհանուր պարտադիր ռազմական ուսուցման, յուրաքանչյուր կոմյերիտականի կողմից ռազմական գիտելիքների ընդհանուր և որևէ մասնագիտական, գլխավորապես տեխնիկական, տեսակի յուրացման խնդիրները:

Կոմյերիտմիության շարքերում տեղ չպետք է ունենան նրանք, ովքեր թերագնահատում են ռազմական պատրաստության անհրաժեշտությունը, և նրանք, ովքեր որ որի վրա ռազմական աշխատանք չեն տանում:

Բացառիկ ուշադրություն պետք է դարձնել Կարմիր բանակի, կոմսոմոլին շեֆարկյալ ռազմա-ծովային և ռազմա-օդային տորմիղների ռազմական և տեխնիկական հզորության ամրապնդման խնդիրներին, ռազմա-դպրոցական հաստատությունները պրոլետարական յերիտասարդության ամենալավ, նախապատրաստված կադրերով համալրելուն, ռազմական տեխնիկայի բնագավառում ցուցաբերված գիտական, գյուտարարական մտքի լայն զարգացման միջոցով, նույնպես և պաշտպանությանը վերաբերող պատվերների ժամանակին կատարելու և որակի լավացման ճանապարհով բանակին, ծովային և օդային տորմիղին արտադրական-տեխնիկական օգնություն ցույց տալուն:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի զարգացումը և մի շարք յերկրներում անմիջական հեղափոխական սիտուացիայի աճումը Համ. ԼԿՅԵՄ-ից պահանջում են ուժեղացնել Կոմյերիտմիության Ինտերնացիոնալի արտասահմանյան յեղբայրական սեկցիաների հետ ունեցած կապը և վճռականորեն ամրապնդել իր շարքերի ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքը:

Ամրապնդելով ձեռք բերած հաջողությունները, ձգտելով ե՛լ ավելի բարձր վերելքի՝ կուսակցության գլխավոր գծի իրականացման գործում իր տարած աշխատանքի, լենինյան Կոմյերիտմիությունը առաջիկայում ևս կլինի Լենինի կուսակցության վստահելի և ամենահավատարիմ ոգնականը:

Կուսակցության գիծը—Համ. ԼԿՅԵՄ-ի գիծն ե:

Կեցցե՛ ՀԱՄԿ (բ) Կ-ն:

Կեցցե՛ Լենինյան Կոմյերիտմիությունը:

---

## ԽՍՀՄ-Ի ԱԶԳԱՅԻՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ընդունված ե միաձայն)

Պրոլետարական հեղափոխության հաղթանակը մեր յերկրում, լենինյան ազգային քաղաքականության պըրակտիկ իրականացումը Համ. Կ (բ) Կ-ի և ԽՍՀՄ-ի բանվորական դասակարգի կողմից—լիակատար հնարավորություն տվին Խորհրդային Միության մեջ բնակվող նախկին բոլոր ճնշված ազգերին և ժողովուրդներին ազատագրվելու ազգային ստրկացումից:

Այս հաջողությունների հիման վրա պրոլետարիատը ձեռք բերեց բոլոր ազգությունների աշխատավորների



անխորտակելի միասնությունն ու դեպի կոմունիզմը տածած լիակատար հավատը: ԽՍՀՄ-ի կազմակերպումը՝ վորպես ազատագրված ժողովուրդների քաղաքական, տնտեսական և կուլտուրական ամենասերտ միության ձև, ամենալավ հաստատումն ե այս միության և ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր ազգությունների աշխատավորների կողմից դեպի կոմունիզմը տածած հավատի ու վստահության:

Այս միության հիման վրա, ՀամԿ (բ) Կ-ի ղեկավարությամբ, ԽՍՀՄ ժողովուրդները հսկայական հաջողություններ ձեռք բերին:

Արդյունաբերական շինարարության աննախընթաց թափը ազգային հանրապետություններում և մարզերում, նույնպես և գյուղի սոցիալիստական վերակառուցման հսկայական հաջողությունները, դրա հետ մեկտեղ նաև ազգային կուլտուրաների վերածնունդն ու բուռն ծաղկումը—ԽՍՀՄ-ի ժողովուրդների ինտերնացիոնալ միության հետևանքների ակնառու նկարազարդումն են հանդիսանում:

Ազգային հանրապետությունների տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում ամենաակտիվ մասնակցություն ունենալով, Համ. ԼԿՅԵՄ-ը հսկայական հաջողություններ ե ձեռք բերել նախկին ճնշված ազգությունների բանվորական և գյուղացիական յերիտասարդության ամենալայն կադրերն ընդգրկելու, ազգային յերիտասարդության ակտիվից մեծ կադրեր դեպի կուսակցական, կոմյերիտական, արհեստակցական, խորհրդային, տնտեսական և կուլտուրական աշխատանքներ առաջ քաշելու գործում: Նացիոնալիզմի և շովինիզմի դեմ տարած անխնա պայքարում

Համ. ԼԿՅԵՄ-ը ձեռք է բերել վճռական հաջողություններ՝ յերիտասարդության մեջ ազգամիջյան պառակտումների վերացման գործում:

## ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Կոմյերիտմիությունը կոչված է կատարելու կարեվորագույն դեր կուսակցության լենինյան ազգային քաղաքականության անցկացման գործում, ԽՍՀՄ-ի ժողովուրդների տնտեսական և կուլտուրական շինարարության լայն զարգացման գործում: Այս ուղղությամբ համագումարը միության առաջ դնում է հետեվյալ հիմնական խնդիրները.*

*1. ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարությունը ազգային ծայրագավառների և ազգային հանրապետությունների արդյունաբերական զարգացման լայն հեռանկարներ է բաց անում: Համ. ԼԿՅԵՄ-ի կազմակերպությունները պետք է ամենաիրական մասնակցություն ունենան շինարարությունների նշված պլանները ժամանակին իրագործելու խնդրում, այս շինարարությունները յերիտասարդության շարքերից վերցրած բանվորական կադրերով ապահովելում, դրանով իսկ ստեղծելով տեղական ազգությունների յերիտասարդությունից պրոլետարիատի լայն կադրեր:* Ֆաբրիկաների, գործարանների, հանքասրահների, յերկաթուղիների, ելեկտրակայանների շինարարության մեջ կոմյերիտականները պետք է ցույց տան սոցիալիստական վերաբերմունքի փայլուն օրինակներ դեպի աշխատանքը՝ ընդհանրական մասնակցություն ցուցաբերելով սոցմրցակցության և



հարվածայնության մեջ, խնամքով վերաբերվելով դեպի հումույթը, շինանյութերը և գործիքները:

Բնական հարստությունների նոր մշակույթները, բոլոր նոր շինարարությունները ազգային հանրապետություններում և մարզերում —պիտի դառնան լենինյան Կոմյերիտմիության իսկական զավակներ, նրա մշտական հոգացողության առարկաներ:

*2. Գյուղական կոմյերիտմիությունը պիտի դառնա խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, ազգային հանրապետությունների ու մարզերի գյուղատնտեսության մեջ բարձր յեկամտաբեր տեխնիկական կուլտուրաների (բամբակ, վուշ, թեյ, ծխախոտ և այլն) պատվաստման ու զարգացման նախամարտիկը, նախաձեռնողը և կազմակերպիչը, նույնպես և, յելնելով շրջանի տնտեսական առանձնահատկություններից, պետք է ընդհուպ մոտենա անասնաբուծության պրոբլեմի լուծմանը: Կոմյերիտական կազմակերպությունները պետք է լինեն կուսակցության և խորհրդային իշխանության ամենաառաջին օգնականները հողա-ջրային ռեֆորմի հետագա անցկացման գործում և այս միջոցառումների ընթացքում պետք է հակահարված տան ազգայնական գյուղի բոլոր բուրժուա-կապիտալիստական տարրերին:*

*3. Բացառիկ կարեվոր նշանակություն տալով ազգային հանրապետությունների և մարզերի խորհուրդներում Կոմյերիտմիության կատարելիք աշխատանքներին՝ իրագործելու ազգային գյուղում խորհրդային ակտիվի դաստիարակման խնդիրը, համագումարն անհրաժեշտ է գտնում.—*

*ա) ակտիվ կերպով օգնել կուսակցությանը՝ ազգա-*

յին հանրապետությունների և մարզերի տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ խորհուրդների դերի բարձրացման գործում,

բ) վճռական պայքար մղել խորհուրդների մեջ դասակարգայնորեն թշնամի տարրերի ներս սողոսկման դեմ, ամրապնդել չքավորության, բատրակության և կոլտնտեսականների ղեկավար դերը խորհուրդների մեջ,

գ) կազմակերպել խորհրդային օրգանների հետ միասին յերիտասարդական կադրերի սիստեմատիկ նախապատրաստությունը և առաջքաշումը մշտական աշխատանքի խորհուրդների մեջ:

4. Համ. ԼԿՅԵՄ-ի հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում ամենաակտիվ կերպով մասնակցել «ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական» ազգային կուլտուրաների զարգացման գործին, ընդունելով ազգային կուլտուրաների ծաղկումը՝ վորպես ԽՍՀՄ-ի ամբողջ սոցիալիստական շինարարության մի անբաժանելի մասը: Անհրաժեշտ է անհաշտ պայքար մղել ընդդեմ դասակարգային թշնամու ակտիվ փորձերի՝ ձախողելու ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային-կուլտուրական շինարարությունը, ամրացնելու նրա պրոլետարական բովանդակությունը և չեզոքացնելու բուռն կերպով ծավալվող պրոլետարական կուլտուրայի հետ շփումն ունենալուց և նրա ազդեցությունից:

5. Աշխատավոր բնակչության նշանակալից մասի անգրագիտությունը, մանավանդ Արևելքի խորհրդային հանրապետություններում, ուժեղ սոցիալիստական շինարարության խոչընդոտներից մեկն է հանդիսանում, իսկ այդ անգրագիտության լիկվիդացիան—կուլտուրական հեղափոխության առաջնակարգ և կարևորագույն խնդիրը:

Համագումարը դնում է ընդհանուր տարրական ուսուցման և անգրագիտության վերացման գործում ակտիվ կերպով մասնակցելու խնդիրը, նույնպես և մինչև 1931 թ. վերջերը ազգային հանրապետություններում և մարզերում կոմյերիտականների անգրագիտության գըլխովին վերացման խնդիրը: Այս նպատակով անհրաժեշտ է ավելի ևս ակտիվ մասնակցություն ունենալ այբուբենի լատինացումն անցկացնելու գործում և առաջներում գիր չունեցող ազգությունների և ժողովուրդների համար գրության ձև ստեղծելու գործի ավարտման մեջ:

6. Տնտեսական և կուլտուրական շինարարության հնգամյա պլանի իրագործումը պահանջում է նախապատրաստել և դաստիարակել վորակյալ բանվորների հսկայական կադրեր, կուլտուրական և վորակյալ կադրեր շինարարության բոլոր բնագավառների համար:

Համագումարն անհրաժեշտ է համարում ել ավելի ապահովել՝ ազգային հանրապետություններում և մարզերում հիմնվելիք ֆաբգործուսների, կոմյերիտդպրոցների, մասնագիտական տեխնիկումների, բարձրագույն կրթական հիմնարկների, բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկների, մասնագիտական կուրսերի արագընթաց շինարարությունը, բարձրագույն և միջնակարգ դպրոցների պոլիտեխնիկացիայի վճռական անցկացումը, բանվոր, բատրակ և կոլտնտեսական յերիտասարդության մասսաներին դպրոցական հիմնարկների մեջ ներգրավելը և դեպի արդյունաբերական կենտրոնները սովորելու ուղարկելը:

7. Դասակարգային թշնամու ակտիվ ջանքերը՝

մացնելու իր ազդեցությունը գեղարվեստական ու քաղաքական գրականության մեջ և ազգային ծաղկող գեղարվեստի բոլոր տեսակների մեջ, դա մի պայքար է, ավելի սուր կերպով ընթացող մի պայքար այն ազգությունների մեջ, վորոնք անցյալից ժառանգել են ազգային բուրժուական ինտելիգենցիայի ավելի ուժեղ կադրեր, և այդ պայքարը պարտադրում է Կոմյերիտմիությանը այդ ուղղությամբ ցուցաբերել դասակարգային զգոնության մաքսիմումը, անհաշտ պայքար մղել գեղարվեստի և գրականության մեջ դասակարգային թշնամու ազդեցությունը չեզոքացնելու համար, անխնա մերկացնել թշնամական իդեոլոգիան իր բոլոր ձևերով և թշնամու բոլոր սքողվելու միջոցները:

8. Սոցիալիստական շինարարության ճանապարհին, մանավանդ Արևելքի խորհրդային հանրապետությունների և Կովկասյան մի քանի ժողովուրդների մեջ, մեծ խոչընդոտ են հանդիսանում կրոնական փանատիզմի և հին սովորական կյանքի գծերի մնացորդների ազդեցությունները (արյունահեղ վրեժխնդրություն, կնոջ ստրկացում և այլն):

Պահպանելով առավելագույն տակտ, ամեն կերպ դուրս վանելով ադմինիստրատորության մեթոդները կրոնական նախապաշարմունքների և կենցաղային բացասական մնացորդների դեմ վարելիք պայքարից, Կոմյերիտմիությունը պետք է համոզելու և մասսաներին դաստիարակելու մեթոդով վճռական հարձակում մղի կրոնի ազդեցության դեմ, անցյալի բացասական տրադիցիաները ամենաարագ կերպով վերացնելու համար: Այս ուղղությամբ կանանց՝ պարանջայից, չադրայից և փակվածությունից ազատագրելու համար մղելիք պայ-



քարը հանդիսանում է Կոմյերիտմիության ամենակարևորագույն խնդիրներից մեկը:

Համարելով ազգային կազմակերպություններում աղջիկների մեջ տարած աշխատանքը դեռևս անբավարար, հաշվի առնելով այս աշխատանքի հսկայական դերը Արևելքի կանանց վերջնական ազատագրության և սոցիալիստական շինարարությանը ակտիվ կերպով մասնակից անելու գործում, համագումարն առաջարկում է ազգային կազմակերպություններին ձեռք առնել մի շարք կոնկրետ միջոցներ աղջիկներին միության մեջ ավելի լայն չափով ներգրավելու վերաբերմամբ: Այս նպատակով անհրաժեշտ է ավելի համարձակ և վճռական կերպով առաջ քաշել աղջիկներին միութենական և հասարակական աշխատանքի:

9. Տեղական բնիկ ազգություններից, պրոլետարական և կիսապրոլետարական խավերից ե՛լ ավելի համառ կերպով ակտիվ առաջ քաշելով, անհրաժեշտ է լրջորեն ուշադրություն դարձնել նրա քաղաքական դաստիարակության և կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

Ազգային կազմակերպություններում աշխատող կոմյերիտմիության ակտիվ աշխատավորների միջավայրում անհրաժեշտ է անհաշտ պայքար մղել ընդդեմ պարզեցման, վոր արտահայտվում է «տնտեսական և կուլտուրական շինարարության ձևերի մեխանիկական փոխադրման փորձերի մեջ, վորպիսիները միանգամայն հասկանալի և ընդունելի յեն Խորհրդային Միության կենտրոնում, մինչդեռ բոլորովին չեն համապատասխանում այսպես կոչված ծայրամասերի զարգացման պայմաններին»: «Այս թեքման արդյունքն է հանդիսա-

նում մասսաներից կտրվելը և «ձախ» փրազյորների փոխարկվելը»:

*Անխնա պայքար պետք է մղել նաև այն թեքումների դեմ, վորոնք կայանում են* «տեղական առանձնահատկությունների չափազանցեցման մեջ, այն ընդհանուրն ու գլխավորը մոռացության տալու մեջ, վորոնք կապում են Արևելքի խորհրդային հանրապետությունները Խորհրդային Միության արդյունաբերական շրջանների հետ, սոցիալիստական խնդիրները լռության մատնելու մեջ, նեղ և սահմանափակ նացիոնալիզմի խնդիրներին համակերպվելու մեջ»:

«*Այս թեքման հետևանքն է հանդիսանում սոցիալիզմից կտրվելը* և սովորական բուրժուական նացիոնալիստների վերասերվելը» (*Ստալին*):

*Այս թեքումների դեմ անհաշտ պայքար մղելու վոգով, լենինյան ազգային քաղաքականության յուրացման, աշխատավոր յերիտասարդության մասսաների աճող ակտիվությունը գլխավորելու և այն դեպի սոցիալիզմի խնդիրների իրագործելուն ուղղելու ունակության հիման վրա պետք է դաստիարակվի միության ազգային կազմակերպությունների ակտիվը:*

10. *Բանվոր և բատրակ յերիտասարդությանը հարյուր տոկոսով Կոմյերիտմիության մեջ ներգրավելու խնդիրը, վորը եյականապես կապված է ազգային հանրապետությունների և մարզերի մեջ պրոլետարական ղեկավարությունն ամրապնդելու հետ, առաջնակարգ նշանակություն է ստանում և իր անհետաձգելի իրագործումն է պահանջում:*

*Համագումարն անհրաժեշտ է համարում ուժեղացնել Համ. ԼԿՅԵՄ-ի աճման տեմպերը ազգային հանրապետություններում և մարզերում ի հաշիվ բնիկ ազգությունների յերիտասարդության, չթույլատրելով աճման մեջ դասակարգային գիծը փոխանակել ազգային յերիտասարդությանը քանակապես ընդգրկելու ձգտումով, առանց հաշվի առնելու նրա քաղաքական և սոցիալական դեմքը:*

11. *Համագումարն անբավարար է համարում ազգային կազմակերպություններում կոմյերիտականների քաղաքական լուսավորության գործի դրվածքը և տեղական կազմակերպություններին ու ԿԿ-ին առաջարկում է լուրջ ուշադրություն դարձնել ազգային լեզուներով կոմյերիտական գրականության զարգացմանը, ապահովել քաղդասագրքերի սիստեմատիկ հրատարակությունը, ուժեղացնել յերիտասարդության լրագրերի ղեկավարությունը և այլն ազգային լեզուներով, լայնացնելով նրանց ցանցը:*

*Համագումարը պարտավորեցնում է «Մոլոդայա գվարդիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Յունիյ կոմունիստ» և մյուս կենտրոնական օրգաններին ակտիվ կերպով օգնել և հաղորդել իր փորձը ազգային կոմյերիտական մամուլին. բոլոր օղակներում ապահովել քաղկրթությունը, ազգային հարցի ուսումնասիրությունը և գործնական միջոցներ ձեռք առնել բնիկ ազգությունների կոմյերիտականներից պրոպագանդիստական կադրեր պատրաստելու և վերապատրաստելու վերաբերմամբ:*

12. *Պիոներական շարժումը կոչված է խոշոր դեր խաղալու ազգային և կենցաղային նախապաշարմունքները վերջնականապես արմատախիլ անելու գործում:*

*Համագումարն առաջարկում է Կոմյերիտմիության*

ազգային կազմակերպություններին մաքսիմալ ուշադրություն նվիրել մանկական կոմունիստական շարժմանը, ապահովել այս շարժմամբ մանկական լայն մասսաների ընդգրկումը, մանավանդ աղջիկների, և մանուկների մեջ աշխատանք տանելու համար տալ իր ակտիվի ամենալավ ուժերը:

13. Իմպերիալիստների ակտիվ փորձերը՝ դաշնակցած մեր յերկրի ներսում գտնվող բոլոր դասակարգային թշնամիների հետ կազմակերպել ինտերվենցիա ԽՍՀՄ-ի դեմ—ազգային կազմակերպությունների առաջ դնում են ռազմական աշխատանքն ամեն կերպ ուժեղացնելու խնդիրը:

Ակտիվ կերպով մասնակցել Կարմիր Բանակի ազգային զորամասերի շինարարության մեջ, լայն կերպով ժողովրդականացնել Կարմիր Բանակի նշանակությունը, ամենալավ կադրերն ուղարկելով ռազմական դպրոցներ, իր ակտիվությամբ գլխավորելով Օսոավիախիմի աշխատանքը և յերիտասարդության ու աշխատավոր բնակչության լայն մասսաների ռազմականացումը, ազգային կազմակերպությունների կոմյերիտմիությունը պետք է նպաստի ԽՍՀՄ-ի ժողովուրդների ռազմական հզորության աճմանը և այս կոնկրետ գործունեության ընթացքում գործնականորեն ամրապնդի Խորհրդային Միության բոլոր ազգությունների աշխատավորների միասնական ֆրոնտն ընդդեմ իմպերիալիզմի:

## ՊԱՅՔԱՐ ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀՍՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Չնայելով ազգային հանրապետությունների և մարզերի տնտեսական, քաղաքական և կուլտուրական շինարարության մեջ ձեռք բերած խոշորագույն հաջողու-



թյուններին, մեզնում դեռևս լրիվ կերպով չեն վերացված ազգային անհավասարության տարրերը, քանի վոր «պատմական զարգացման շնորհիվ մենք ստացել ենք անցյալից մի ժառանգություն, վորով ազգություններից մեկը, հատկապես վելիկոռուսականը, քաղաքական և արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած դուրս յեկավ, քան մյուս ազգությունները:

Այստեղից էլ—հենց փաստորեն այն անհավասարությունը, վորը չի կարող վերացվել մի տարում, բայց վորը պետք է վերացվի յետամնաց ազգություններին տնտեսական, քաղաքական և կուլտուրական օգնություն ցույց տալու ճանապարհով» (Ստալին):

ԽՍՀՄ-ի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հնգամյա պլանի իրագործումը հանդիսանում է վորպես վճռողական փակտոր ԽՍՀՄ-ի ազգությունների միջև յեղած հետամնացության տարրերը վերջնականապես վոչնչացնելու գործում: Սոցիալիստական շինարարության հետագա զարգացումը կոգնի յետամնաց ազգություններին պատմական ամենամոտ ժամանակաշրջանում տնտեսական և կուլտուրական տեսակետից հասնել առաջավոր ազգություններին: Այստեղից էլ—հնգամյակի համար մղվող պայքարը Խորհրդային Միության ազգությունների միջև յեղած ազգային անհավասարության տարրերի վերացման պայքար է:

1. Սոցիալիստական շինարարության խոշոր հաջողությունները յերկրում տանում են դեպի ԽՍՀՄ-ի ժողովուրդների յեղբայրական աշխատակցության ամրապնդումը, բանվոր դասակարգի, կուսակցության և կոմյերիտմիության շարքերում ամրապնդում են ինտերնացիոնալ կապը: Դրա հետ մեկտեղ դասակարգային

թշնամին առանց ազգությունների խտրության (կուլակը, նեպմանը, նախկին ֆեոդալը, բայը, տերտերը, մոլլան, կսենձը և տարբեր ազգությունների հակահեղափոխական ինտելիգենցիան) կատաղի ճիգեր է գործադրում ձախողելու կուսակցության և խորհրդային իշխանության տնտեսական, կուլտուրական և քաղաքական միջոցառումները, փորձում է պահպանել հին տնտեսական, կենցաղային, կուլտուրական դրվածքը, այսինքն՝ աղքատությունը, խավարը, ազգային ծայրամասերի և հանրապետությունների աշխատավորության մեջ, և այս նպատակով գիտակցաբար բորբոքում է ազգային խտրությունը, աշխատելով վիժեցնել Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը: Այս հանգամանքը ակտիվացնում է թեքումը դեպի վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի կողմը՝ ինչպես կուսակցության մեջ, այնպես էլ Համ.ԼԿՅԵՄ–ի շարքերում:

2. Համագումարն անհրաժեշտ է համարում ուժեղացնել պայքարը կոմյերիտմիության շարքերում ազգային հարցի նկատմամբ արտահայտվող թեքումների դեմ: Ընդ որին դեպի վելիկոռուսական շովինիզմը յեղած թեքումը առաջվա նման մնում է, վորպես գլխավոր վտանգ ինչպես կուսակցության, նույնպես և կոմյերիտմիության մեջ: Թեքումը դեպի վելիկոռուսական շովինիզմը արտահայտվում է ազգային լեզուների, կուլտուրայի, կենցաղային առանձնահատկությունների անգիտացման մեջ, պետապարատի, դպրոցի և մամուլի ազգայնացումն արգելակելու ձգտման մեջ, ազգային մարզերը և հանրապետությունները լիկվիդացիայի յենթարկելու մեջ, ազգային բառակ և չքավոր յերիտասարդության մեջ տարվող աշխատանքը թերագնահա-



տելու մեջ: Թեքումը դեպի վելիկոռուսական շովինիզմը արտացոլում է նախկին տիրապետող ազգության թուլացող դասակարգերի ձգտումը՝ վերադարձնել իր կորցրած արտոնությունները:

Ընդ որին մեծապետական թեքումը հաճախ է հանդես գալիս ինտերնացիոնալիզմի քողարկման տակ և ճանկում է նույնիսկ անհատ կոմյերիտականների, նախկին ճնշված ազգություններից յեկողների:

3. Սրա հետ մեկտեղ անհրաժեշտ է վճռական պայքար մղել տեղական նացիոնալիզմի դեմ: Թեքումը դեպի տեղական նացիոնալիզմն արտահայտվում է «իր ազգության ներսում յեղած դասակարգային հակասությունները սքողելու ձգտման մեջ», «իր ազգային կեղևի շրջանակներում» առանձնանալու և պարփակվելու տենդենցի մեջ, ազգային կուլտուրայի պրոլետարական բովանդակությունը բուրժուականով փոխելու մեջ և այլն: Թեքումը դեպի տեղական նացիոնալիզմը կուսակցության և կոմյերիտմիության շարքերում–արտացոլումն է նախկին ճնշված ազգությունների թուլացող, պրոլետարիատի սոցիալիստական հարձակումից դուրս դասակարգերի իդեոլոգիայի և ջուր է ածում ինտերվենցիայի ջրաղացին:

4. Կոմյերիտմիության խնդիրն է՝ անխնա պայքարել մեծապետականության դեմ, դիմադրել անել թուլացող դասակարգերի շահերն ու ակնկալությունները նրա մեջ մեր յերկրում, ակտիվ կերպով աջակցել նախկին ճնշված ժողովուրդների աշխատավոր դասակարգերին.–

ա) «զարգացնել և ամրապնդել իրենց մոտ խորհրդային պետականությունը այն ձևերով, վորոնք համա-

*պատասխանում են այդ ժողովրդների ազգային-կենցաղային պայմաններին.*

*բ) զարգացնել և ամրացնել իրենց մոտ մայրենի լեզվով գործող դատարանը, ադմինիստրացիան, տնտեսության մարմինները, իշխանության մարմինները՝ կազմված տեղացի, տեղի ազգաբնակչության կենցաղն ու հոգեբանությունն իմացող մարդկանցից.*

*գ) զարգացնել իրենց մոտ մամուլն ու դպրոցը, ակումբային գործը և ընդհանրապես կուլտուր-լուսավորչական հիմնարկները մայրենի լեզվով.*

*դ) դնել և զարգացնել լայն ցանցը դասընթացների և դպրոցների, ինչպես հանրակրթական, նույնպես և մասնագիտական-տեխնիկական բնույթի, մայրենի լեզվով»․ (ՀամԿ(բ)Կ-ի X-րդ համագումարի որոշումներից):*

5․ *Համագումարը միության ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, որ զանազան հակահեղափոխական ազգայնական կազմակերպություններ (*СВУ *մենշևիկներ, մուսավաթիստներ, դաշնակներ, սուլտանգալիևշչինա, Ալաշ-օրդա և այլն) մրցակցության են դուրս գալիս գրավելու երիտասարդությանը ազգային հանրապետություններում և մարզերում: Այս տեսակետից ակտիվ կերպով օգտագործելով ուսանող երիտասարդության և երիտասարդ ինտելիգենցիայի բուրժուական և մանր-բուրժուական տարրերը, թուլացող դասակարգերն ամեն միջոց ձեռք են առնում շովինիստական թույնով չշմեցնելու նաև բանվորների, բատրակների, միջակ երիտասարդության, պրոլետարական ուսանողության և պրոլետարական ինտելիգենցիայի լայն խավերին:*

6․ *Համագումարը կոչ է անում բոլոր կազմակերպություններին և կոմյերիտմիության բոլոր անդամներին անխնա պայքար մղել ինչպես տեղական նացիոնալիզմի, նույնպես և վելիկոռուսական շովինիզմի դեմ՝ որպես գլխավոր վտանգի:*



Չպետք է լինի ոչ մի կոմյերիտական, որը չդաստիարակի բանվորագյուղացիական երիտասարդությանը իսկական ինտերնացիոնալիզմի ոգով, ազգայնական խտրությունները չհանդուրժող ոգով:

Կոմյերիտականը ԽՍՀՄ-ի ժողովուրդների ինտերնացիոնալ միասնության ամրապնդման գործի նախամարտիկն է: Կոմյերիտականը՝ նացիոնալիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ կռվող առաջապահ մարտիկն է: *Ի պատասխան զանազան ազգությունների բուրժուական տարրերի փորձերի՝ հակադրել սոցիալիստական շինարարության ազգայնական խտրությունների բորբոքումը—կոմյերիտականը, պայքարելով ինդուստրացման բարձր տեմպերի և ԽՍՀՄ-ի համատարած կոլեկտիվացումն ամեն կերպ իրագործելու ու այդ հիմքի վրա կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացիայի ենթարկելու համար, պայքարելով զանազան օպորտունիստական թեքումների դեմ,* պետք է կոփի իր շարքերի լենինյան ինտերնացիոնալ միասնությունն ու մարտական համախմբումը: *Մի ազգության կողմից մյուսին ճնշելն ու ստրկացնելը դրված է հենց իմպերիալիզմի հիմքում: Իմպերիալիզմի ճգնաժամն ու այդ հողի վրա առանձին իմպերիալիստական երկրների միջև հետզհետե աճող հակասությունները, նմանապես և դասակարգային հակասությունները իմպերիալիստական երկրների ներսում այդ երկրների գաղութային ժողովուրդների և ազգային փոքրամասնու-*

թյուններին հասցնում են ե՛լ ավելի մեծ ստրկության և ճնշվածության:

Միմիայն հաղթական պրոլետարիատն է ընդունակ իր դիկտատուրայի միջոցով ազատագրել ճնշված ազգությունները, վոչնչացնել ազգային անհավասարության և ազգամիջյան խտրությունների բոլոր տարրերը, վորպիսինները գործադրվում են բուրժուազիայի կողմից հօգուտ իր դասակարգային շահերի:

ԽՍՀՄ-ի պրոլետարիատը Լենինի կուսակցության ղեկավարության տակ արդեն այդ ուղղությամբ հսկայական հաջողություններ է ձեռք բերել: Կոմսոմոլն ու նրա ղեկավարության տակ գտնվող յերիտասարդ սերունդը կոչված են պրակտիկորեն իրագործելու սոցիալիզմի կառուցումը, հասցնելու ԽՍՀՄ-ի ժողովուրդների եկոնոմիկան և կուլտուրան մարդկության պատմության մեջ մինչև այժմ չտեսնված ծաղկման, ամրապնդելու ԽՍՀՄ-ն՝ վորպես անխորտակելի պատվար ու հենարան աշխարհի բոլոր ճնշված ազգերի և ժողովուրդների համար՝ իմպերիալիզմի դեմ նրանց մղած պայքարում:

---

## ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ՝ ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆՈՒՄ ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի ՈՒՆԵՑԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ.

(Ընդունված է միաձայն)

Լսելով Յերիտկոմինտերնի ԳԿ-ում Համ. ԼԿՅԵՄ-ի ունեցած պատգամավորության զեկուցումը, Համ. ԼԿՅԵՄ-ի IX-րդ համագումարը հավանություն է տալիս պատգամավորության քաղաքական գծին և հիմնականում նրա գործնական աշխատանքին:



Կապիտալիստական աշխարհը ցնցվում է իր խորությամբ և թափով աննախընթաց տնտեսական չտեսնված ճգնաժամով: «Կապիտալիզմի ստաբիլիզացիայի վախճանը վրա յե հասնում» (Ստալին): Մի շարք կարևորագույն յերկրներում տնտեսական ճգնաժամը վերածվում է քաղաքականի, բանալով այդպիսով հեղափոխական սիտուացիայի հեռանկարները վոչ հեռու ապագայի համար: Սոցիալիստական շինարարության հսկայական հաջողությունները ԽՍՀՄ-ում, վորն ավարտում է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, և միաժամանակ հեղափոխական վերելքը կապիտալի յերկրներում խոսում են համաշխարհային պրոլետարական հեղափոխության ուժերի խոշորագույն աճման մասին: Տենդագին պատրաստություններ տեսնելով նոր պատերազմի համար, առաջին հերթին ընդդեմ ԽՍՀՄ-ի, կապիտալի հարձակում գործելով աշխատավոր մասսաների և նրանց թվում յերիտասարդության կենսական մակարդակի և իրավունքների վրա, բուրժուազիան փորձում է ամրապնդել իր յերերուն դիրքերը և կանխել իր կործանումը:

Ուժեղացնելով յերիտասարդության շահագործումը, բուրժուազիան միաժամանակ գործադրում է յերիտասարդությանը ֆաշիստական քաջքշուկի յենթարկելու մեթոդը: Ծավալելով դեմագոգիական ագիտացիան (Յունգի պլանի դեմ, խոշոր կապիտալի դեմ և այլն), ֆաշիստներն իրենց «ռադիկալ» լոզունգներով գրավում են աշխատավոր յերիտասարդությանը, օգտագործում են նրա քաղաքական ակտիվության չձևակերպված աճումը:

Ֆաշիստների ագիտացիան առաջին հերթին գրա-

վում է ուսանող, ծառայող և գյուղացիական յերիտասարդությանը, նույնպես և բանվոր յերիտասարդության նվազագույն գիտակից խավի մի մասին: Պրոլետարական յերիտասարդության շարքերում վորպես գլխավոր թշնամի շարունակում է մնալ ռեֆորմիզմը՝ հանձին Յերիտսոցինտերնի կազմակերպության, ռեֆորմիստական պրոֆմիությունների յերիտսեկցիաների, սպորտական և կուլտուրական այն կազմակերպությունների, վորոնք գտնվում են ռեֆորմիստական ղեկավարության տակ, նույնպես և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների անմիջական ազդեցության տակ:

Յերիտսոցինտերնը, վոր կարողացել է նախընթաց տարիներին ստաբիլիզացիայի յենթարկել և նույնիսկ մասնակի կերպով ընդարձակել իր կազմակերպությունների շարքերը, ներկայումս, տնտեսական ճգնաժամի և յերիտասարդության մասսաների հեղափոխական ակտիվության աճման հարվածների տակ, սկսում է նորից կորցնել իր դիրքերը, ընդ վորում Գերմանիայում յերիտասարդության սոցիալ-դեմոկրատական միության զարգացումն ընդունել է խորագույն ճգնաժամի բնույթ: Այն ժամանակ, յերբ մենշևիկյան առաջնորդներն անցան ֆաշիզմի լագերը, Յերիտսոցինտերնի սեկցիաներում կազմակերպված պրոլետարական յերիտասարդության մասսաներն սկսեցին ե՛լ ավելի սթափվել, անցնել հակաֆաշիստական ակտիվ պայքարի և մտնել հեղափոխության լագերը: Այս հանգամանքը պատճառ չպետք է դառնա թերագնահատելու այն ուժերը, վոր դեռ ունեն ռեֆորմիստները բանվորական յերիտասարդության շարքերում, և վոչ էլ թերագնահատելու նրանց զորաշարժեր կատարելու ընդունակությունները:



Մտնելով սոցիալ-ֆաշիզմի ուղին, ռեֆորմիստներն այժմ ուժեղացնում են իրենց «ձախ» ֆրազեոլոգիան, աշխատելով պահել բուրժուազիայի համար նրանից հեռացող պրոլետարական յերիտասարդության մասսաներին: Յերիտասարդության ռեֆորմիստական կազմակերպությունները ֆաշիզմին աջակցողների դեր են կատարում, վորը (ֆաշիզմը) ձգտում է աշխատավոր յերիտասարդությանը գցել իր ազդեցության տակ: Այս գործում հատկապես խոշոր տեղ են գրավում ամեն տեսակի կրոնական (քրիստոնեյական) կազմակերպությունները, վորոնք հանդիսանում են իբրև գործիք բուրժուազիայի և նրա քաղաքականության, վոր ուղղված է նոր պատերազմներ պատրաստելու և առաջին հերթին Խորհուրդների յերկրի դեմ «խաչակրաց արշավանք» կազմակերպելու կողմը:

Ֆաշիզմ—այդ նշանակում է շտապ պատրաստություն պատերազմի համար և միաժամանակ աշխատավոր մասսաների շահագործման և ճնշման չլսված ու-րում: Իտալիայի, Լեհաստանի, Բալկանյան յերկրների աշխատավոր յերիտասարդության վիճակը ցայտուն կերպով վկայում է, թե ֆաշիստական իշխանությունը ճնշման և կարիքի վորպես լուծ է բերում իր յետևից. այդ յերկրների օրինակը հանդիսանում է վորպես նախազգուշական կոչ բոլոր յերկրների աշխատավոր յերիտասարդությանը՝ չլսել ֆաշիստների դեմագոգիական խաբեբայական լոզունգներին և միանալ միակ հեղափոխական դրոշի տակ, կոմունիզմի դրոշի տակ, վորը բերում է իրական և վերջնական ազատագրում կապիտալիստական շահագործումից ու ճնշումից, բերում է այն նվաճումները, վոր ձեռք է բերել արդեն ԽՍՀՄ-ի բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը:

Կապիտալիստական ստաբիլիզացիայի սկսված քայքայման և հեղափոխական աճող կռիվների հատկապես ներկա ժամանակաշրջանում մի շարք կարեվորագույն յերկրներում Յերիտկոմինտերնը պետք ե իրականացնի լիակատար շրջադարձ դեպի մասսայական աշխատանքը, վորպեսզի կարողանա լուծել իր հիմնական խնդիրը՝ նվաճել մեծամասնությունը բանվորական և աշխատավոր յերիտասարդության լայն մասսաների:

Յերիտկոմինտերնի կողմից այս խնդիրը լուծելու հնարավորությունները, չնայած աճող հետապնդումներին, դառնում են հետզհետե ավելի բարեհաջող: Աշխատավոր յերիտասարդության աճող կարիքի, շահագործման և գործազրկության պատասխանն ե հանդիսանում նրա հեղափոխական ակտիվության այն աճումը, վորն արտահայտություն ե գտնում պատանեկական բանադուլների աճող վորակի մեջ, բանվորական յերիտասարդության զորեղ ցույցերի մեջ և բանվոր դասակարգի ընդհանուր պայքարում նրա ունեցած հետզհետե ակտիվ մասնակցության մեջ:

Վերջին տարվա ընթացքում Յերիտկոմինտերնը ծավալել ե դեպի մասսաները շրջադարձ կատարելու մասին վորոշումները կյանքի մեջ կիրառելու աշխատանք: Սրա մասին վկայում ե այն տակտիկան, վորին յենթակա յե յեղել առանձին միությունների գործունեությունը, այն ե՝ մի շարք սեկցիաներում ղեկավարության լրիվ և մասնակի վերափոխումը և աշխատանքի նոր ձեվերի կիրառումը, վորպիսիք են՝ կոնկրետ ղեկավարություն, հեղափոխական մրցակցություն, հարվածային բրիգադներ, հարվածային պլաններ և այլն: Սրա հետեվանքով ներկայումս առկա յե Յերիտկոմինտերնի աշխատանքի մեջ նկատելի իդեոլոգիական և կազմա-



կերպչական անկասկած տեղաշարժը, վոր բնորոշում ե շրջադարձը դեպի մասսաները իրագործելու սկիզբը: Սրան ապացույց ե հանդիսանում.—

1. Պայքարի ծավալումը յերկու ֆրոնտի վրա, և մասնավորապես «ձախ» աղանդավորության դեմ, իդեոլոգիական անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը ակտիվի և միության անդամների նշանակալից մասի մեջ շրջադարձն իրականացնելու համար, ինքնաքննադատության ծավալման սկիզբը, աշխատանքի նոր ձեվեր կիրառելը:

2. Յերիտասարդության ամենորյա պայքարը ղեկավարելու սկիզբը, մի շարք յերկրներում յերիտասարդության բանադուլային պայքարի հաջող ղեկավարությունը, յերիտասարդության հեղափոխական մասսայական յելույթների կազմակերպումը՝ XVI Յերիտասարդության միջազգային որը, Լեյպցիգյան յերիտասարդության որը Գերմանիայում:

3. Գերմանական կոմյերիտմիության աշխատանքի մեջ անկասկած բեկման առկայությունը, վոր արտահայտվում ե ինչպես նրա կազմակերպչական արագ աճման մեջ (տարվա ընթացքում 75 %-ով), նույնպես և նրա աշխատանքի վորակական նշանակալից լավացման մեջ: Այս հաջողությունները հնարավոր եյին միայն քաղաքական ամուր ղեկավարություն ստեղծելու հետեվանքով, վորն առանց տատանվելու անցկացներ կուսակցության և Յերիտկոմինտերնի գիծը և ակտիվ կերպով վերակառուցեր իր աշխատանքը յերիտասարդության մասսաների համար մղվող պայքարի պահանջների համաձայն, և այն բանի հետեվանքով, վոր գերմանական կուսակցությունն սկսեց գործով իրակա-

նացնել իր ղեկավար դերը կոմյերիտմիության նկատմամբ–

4․ Մի շարք միություններում անկման առկայումը և նշանակալից հաջողությունները, չնայելով անլեգալ սեկցիաներում գոյություն ունեցող հրեշավոր հետապնդումների։

5․ Մասսայական աշխատանքի հաջողությունները Չինաստանում, մանավանդ խորհրդային շրջաններում (գյուղացիական յերիտասարդության շարժման ուժեղ թափը—«Յերիտասարդ գվարդիա», յերիտասարդության 50–80 տոկոս Կարմիր բանակի մեջ, միության կազմակերպչական նշանակալից աճումը), թեև չինական միության զարգացումը շատ ավելի հաջող կարող եր լինել, յեթե այդ բանին չխանգարեյին քաղաքական այն խոշոր սխալները, վոր կատարեց չինական կուսակցության և կոմյերիտմիության ղեկավարությունը (դրության գերագնահատում, թշնամու ուժերի թերագնահատում և այլն)։

6․ Մոնղոլական հեղափոխական յերիտասարդության խոշոր հաջողությունները, վորը (միությունը) կուսակցության և յերիտասարդության ղեկավարությունից աջ տարրերին դուրս քշելուց հետո Յերիտկոմինտերնի Գործկոմի ղեկավարությամբ ծավալեց լայն հեղափոխական մասսայական աշխատանք Մոնղոլիայի վոչ կապիտալիստական զարգացման ուղղությամբ և վերջին տարվա ընթացքում կրկնապատկեց իր շարքերը։

Նշելով Յերիտկոմինտերնի, անկասկած, այս հաջողությունները, վոր հետեվանք են Կոմինտերնի և Յերիտկոմինտերնի գիծը կյանքում կիրառելու համար մղված համառ պայքարի, Համ․ ԼԿՅԵՄ-ի IX համագումարը դրա հետ մեկտեղ համարում ե, վոր այդ



հաջողությունները դեռ յեվս վճռական չեն մասսաների բանվորական յերիտասարդության մեծամասնության համար մղվող պայքարում։ Միության և Յերիտկոմինտերնի վերակառուցման տեմպերն իրենց ամբողջությամբ շարունակում են մնալ դանդաղ, չհամապատասխանող կապիտալիստական յերկրներում դասակարգային պայքարի սրման և յերիտասարդության մասսաների ակտիվության վերելքի տեմպին։

V-րդ կոնգրեսը համաշխարհային կոմյերիտմիության զարգացման մեջ խոշոր դեր խաղաց, տալով նրա ձեռքը ամենասուր մի զենք, ինչպիսին ե Յերիտկոմինտերնի ծրագիրը, ուղղելով մի շարք սխալ դրույթներ յերիտասարդական կոմունիստական շարժման նախկին պրակտիկայում և թեորիայում և դնելով յերիտկոմինտերնի սեկցիաների առաջ դեպի մասսաները շրջադարձ կատարելու խնդիրը։ Սակայն դրա հետ մեկտեղ V կոնգրեսը բավականաչափ պարզ գնահատական չտվեց Յերիտկոմինտերնի դրության մասին և անալիզի չենթարկեց կուսակցության գծից կատարվող շեղումները Յերիտկոմինտերնի սեկցիաներում նկատվող իրենց սպեցիֆիկ արտահայտությամբ, չդրեց ծավալուն հարձակման խնդիրը՝ յերկու ֆրոնտի վրա—կազմակերպության ներսում՝ վորպես դեպի մասսայական գործունեյության անհրաժեշտ թեքման իրականացման հիմնական նախադրյալ։

Ցույց տալով Կոմինտերնին անկասկած, վերին աստիճանի նշանակալից աջակցություն կուսակցությունների և միությունների աջ օպորտունիստական արտահայտությունների դեմ պայքարելու գործում (Շվեցիա և այլ յերկրներ), Յերիտկոմինտերնի և իր սեկցիաների ղեկավարությունը մինչեվ Յերիտկոմինտերնի

Գործկոմի նոյեմբերյան պլենումը բավարար չափով հասկացողություն չհայտնաբերեց պատանեկական խնդիրներում աջ թեքման սպեցիֆիկ արտահայտությունների մեջ, պարզապես թերագնահատեց «ձախ» վտանգը Յերիտկոմինտերնի մեջ, որի արտահայտությունները՝ կազմակերպությունների աղանդավորական փակվածության, հեղափոխական կեղծ ֆրազեոլոգիայի և մանր-բուրժուական ռադիկալիզմի ձևով, արտակարգ չափով ուժեղ են կոմունիստական միջազգային յերիտասարդական շարժման մեջ և առանց վերացնելու այդ վտանգը, շրջադարձը դեպի մասսայական աշխատանքը անիրագործելի յե:

Յերիտկոմինտերնի Գործկոմի նոյեմբերյան (1929 թվին) պլենումը, Կենտկոմի ղեկավարությամբ, բոլշևիկյան ծավալուն ինքնաքննադատության հիման վրա, տվեց Յերիտկոմինտերնի դրության պարզ և հստակ անալիզը, ամբողջ սրությամբ և վճռականությամբ բաց արեց կոմունիստական միջազգային յերիտասարդական շարժման քաղաքական սխալներն ու կազմակերպչական թուլությունները:

Առաջին անգամ դնելով Յերիտկոմինտերնի առաջ ծավալուն պայքարի խնդիրը յերկու ֆրոնտի վրա՝ ընդդեմ աջ գլխավոր վտանգի և ընդդեմ «ձախ» աղանդավորության՝ որպես դեպի մասսայական աշխատանքը տանող ճանապարհին գտնված կարեվորագույն խոչընդոտի,—պլենումը մատնանշեց Յերիտկոմինտերնի աշխատանքի մեջ անհրաժեշտ շրջադարձը ամենակարճ ժամկետում իրագործելու կոնկրետ ուղիները:

Յերիտկոմինտերնի Գործկոմը, ծավալելով պայքարի ֆրոնտը հօգուտ նոյեմբերյան պլենումի որոշումների, անցած ժամանակաշրջանում ուժեղացրեց իր



անմիջական ղեկավարությունը միությունների վրա: Այնուամենայնիվ Գործկոմի պրակտիկ աշխատանքի տեմպը շարունակում է յետ մնալ շարժման աճող խնդիրներից: Հատկապես միջազգային մասշտաբով յերիտասարդական քաղաքականության ծավալման բնագավառում, ինչպես և ֆաշիզմի և Յերիտսոցինտերնի դեմ պայքարը կազմակերպելու հարցում Գործկոմի ղեկավարությունը յեղել է անբավարար:

Առաջվա նման անթույլատրելի կերպով թույլ է աշխատանքը ձեռնարկությունների մեջ՝ ֆաբրիկա-գործարանային բջիջներ ստեղծելու և միությունները դրանց հիմքի վրա վերակառուցելու նկատմամբ: Նույնիսկ Գերմանիայում, որտեղ կոմյերիտմիությունը մասսայական աշխատանքի բնագավառում ձեռք է բերել ամենամեծ հաջողություններ, արտադրական բջիջների թիվը գրեթե ամենուրեք քչացել է: Անհրաժեշտ է ամենայն համառությամբ դնել միությունների առաջ ձեռնարկությունները, և առաջին հերթին խոշոր ձեռնարկությունները նվաճելու խնդիրը:

Առաջվա նման նկատելի յե դեպի բանվորական մասսայական կազմակերպությունների մեջ տարվելիք աշխատանքները ցուցաբերվող արհամարհական վերաբերմունքը (դեպի պրոֆմիությունները, սպորտմիությունները, կուլտուրական կազմակերպությունները), պրոֆմիությունների մեջ ֆրակցիաների թիվը չնչին է, սպորտմիությունների մեջ աշխատանքը, սակավ բացառությամբ, գրեթե տեղից չի շարժվել, ընդ որում հաճախ կոմյերիտականները հրաժարվում են այս աշխատանքից այն պատրվակով, թե այդ աշխատանքը «քիչ քաղաքական է». գրեթե վոչ մի աշխատանք չի տարվում այնպիսի կազմակերպությունների մեջ, որ-

պիսին է, օրինակ, անաստվածների միությունները։ Անհրաժեշտ է ձգտել կատարելու նոյեմբերյան պլենումի վորոշումները՝ պրոլետարական մասսայական կազմակերպությունների մեջ տարվելիք աշխատանքի մասին։

Բոլոր միություններում նկատելի յե դեռևս յերիտասարդության ամենօրյա մասնակի պահանջների համար մղելիք պայքարի նշանակության թերագնահատում, այդ պահանջների համար՝ միասնական ֆրոնտի հիման վրա՝ պայքարը ներքևից կազմակերպելու անկարողություն։

Յերիտկոմինտերնը պետք է ամբողջ ուշադրությունը դարձնի բանվորական յերիտասարդության տնտեսական ամենօրյա կռիվները ղեկավարելու վրա, բարձրացնելով այդպիսիներին ավելի բարձր մակարդակի վրա, տալով նրանց քաղաքական բովանդակություն. Հատուկ ուշադրություն պիտի դարձնել գործազուրկ յերիտասարդության պայքարը կազմակերպելուն, վոր ներկայումս ստանում է առաջնակարգ նշանակություն։

Միանգամայն անբավարար պայքար է մղվում թշնամի կազմակերպությունների դեմ,—սոցիալ-դեմոկրատական, կրոնական և մանավանդ ֆաշիստական կազմակերպությունների դեմ։ Ֆաշիստական դեմագոգիային ու տերրորին պիտի հակադրել լայն բացատրական աշխատանքը մասսաների մեջ և յերիտասարդության հակաֆաշիստական ուժեղ ֆրոնտի կազմակերպումը։ Անհրաժեշտ է ծավալել լայն աշխատանք՝ բոլոր թշնամական կազմակերպությունները լուծելու նպատակով, ներքևից միասնական ֆրոնտի տակտիկայի հիման վրա։

Թույլ է նաև Յերիտկոմինտերնի սեկցիաների հակապատերազմական և հակամիլիտարիստական աշխատանքը, վորը ներկա պայմաններում հատկապես անթույլատրելի յե։ Մասսայական հակապատերազմական աշխատանքը և քաղաշխատանքը բուրժուական բանակներում ներկայումս հանդիսանում են՝ վորպես կենտրոնական խնդիր, թե Գործկոմի և թե Յերիտկոմինտերնի բոլոր սեկցիաների համար։



Վերջապես, անհրաժեշտ է նշել կոմունիստական մանկական շարժումը ղեկավարելու վերին աստիճանի թույլ լինելը, վոր մի շարք յերկրներում հասցրել է այդ շարժումն իրեն ճգնաժամին և մանկական կազմակերպությունները վեր է ածել աղանդավորական փակ խմբակների։ Կոմունիստական մանկական շարժման վճռական վերակառուցումը՝ Յերիտկոմինտերնի վերջին վորոշումների հիման վրա, հանդիսանում է Յերիտկոմինտերնի սեկցիաների անհետաձգելի խնդիրներից մեկը։

Այս բոլոր թուլությունները վկայում են այն մասին, վոր յերկու ֆրոնտի վրա պայքարը միությունների մեջ, պայքարը նոյեմբերյան պլենումի վորոշումներն իրականացնելու համար, ծավալված է յեղել վոչ բավարար չափով, վոր այդ վորոշումները դեռ չեն հասել մինչև կազմակերպությունների նշանակալից մասը, վոր նրանց իրականացնելու շուրջը բավարար չափով մոբիլիզացիայի յենթարկված չի յեղել լայն մասսաների և միության անդամների ակտիվությունը, բավարար չափով առաջ չեն քաշվել նոր թարմ կադրեր։

Լուծելու համար այն խոշոր խնդիրները, վորոնք ներկայումս դրված են Յերիտկոմինտերնի առաջ, անհրաժեշտ է շարունակել ամենաանհաշտ պայքար նոյեմբերյան պլենումի վորոշումների համար՝ ընդ-

դեմ աջ օպորտունիզմի, որպես գլխավոր վտանգի ներկա ժամանակաշրջանում, որպես դեպի մասսաները տանող ճանապարհի հիմնական խոչընդոտի, ընդդեմ ամեն տեսակի հաշտվողականության և ծպտյալ սաբոտաժի: Անհրաժեշտ է խիզախ, լայն հավաքագրում կոմյերիտմիության մեջ, կադրերի անվախ առաջքաշում և ակտիվի նորոգում՝ բոլշևիկյան վճռական ինքնադատության հետագա ծավալման հիման վրա:

Այս բոլոր խնդիրների հաջող լուծման հիմնական նախադրյալն է հանդիսանում նաև կոմյերիտական կուսակցության դերն ու նրա կողմից կոմյերիտմիու-բագործելը՝ կոմյերիտմիության և նրա ամենօրյա աշխատանքի վերաբերմամբ: Վճռական հակահարված պետք է տալ ավանգարդական տրամադրություններին, կուսակցության դերն ու նրա կողմից կոմյերիտմիությունը ղեկավարելու թերագնահատական տենդենցներին, կոմյերիտմիության մեջ շրջադարձն իրականացնելու խնդրում կուսղեկավարության նշանակությունը թերագնահատելուն:

Աշխատավոր յերիտասարդության մասսաների համար, բոլոր յերկրներում բոլշևիկյան յերիտասարդական մասսայական միություններ ստեղծելու համար մղվող պայքարում Յերիտկոմինտերն ու իր ղեկավարությունն ապահովված են ամբողջ լենինյան կոմյերիտմիության ամենաանկեղծ աջակցությամբ:

Համ. ԼԿՅԵՄ դերն ու մասնակցությունը Յերիտկոմինտերնի կյանքում վերջին յերկու տարվա ընթացքում անպայմանորեն աճել են: Համ. ԼԿՅԵՄ-ի խոշոր հաջողությունները՝ բանվորադյուղացիական յերիտասարդությունը սոցիալիստական պետության մեջ ներգրավելու



գործում, կուսակցության գլխավոր գծի համար պայքարելու գործում նշանակում է ամբողջ Յերիտկոմինտերնի խոշոր հաղթանակը, ամբողջ միջազգային հեղափոխական յերիտասարդական շարժման դիրքերի խոշոր ամրապնդումը: Սակայն Յերիտկոմինտերնի, թե Գործկոմի և թե նրա սեկցիաների գործունեության հետ ունեցած ծանոթությունը մեր միության մեջ բավարար չի կարելի համարել: Աշխատավոր յերիտասարդության լայն մասսաներին դաստիարակելով կոմունիզմի ոգով՝ յերկրի սոցիալիստական վերակառուցման մեջ ամենաակտիվ մասնակցություն ունենալու հիման վրա, միությունը պարտավոր է դրա հետ մեկտեղ ուժեղացնել իր կազմակերպությունների ինտերնացիոնալ աշխատանքը՝ որպես միջազգային իսկական հեղափոխականներ դաստիարակելու անհրաժեշտ պայման: Փորձը ցույց է տվել, որ միության ղեկավար օրգաններին կից հատուկ միջազգային աշխատանքը պետք է տանեն կոմիտեները ամբողջապես (և մասնավորապես պրոպագանդայի բաժինները): Յերիտկոմինտերնում Համ. ԼԿՅԵՄ-ի ունեցած պատգամավորությունը պետք է ցուցաբերի նշանակալից չափով մեծ ձեռներեցություն միության միջազգային աշխատանքի դրվածքի մեջ: Նպատակահարմար և անհրաժեշտ է բջիջներում կազմել առանձին լիազորներ և կազմակերպիչներ միջազգային աշխատանքի համար:

Նշելով միության խոշոր նվաճումները ինտերնացիոնալ աշխատանքի բնագավառում, ինչպես, օրինակ, «Интернационал молодежи» թերթը, համագումարը միության բոլոր կազմակերպություններին կոչ է անում ամեն կերպ աջակցել թերթի հետագա աճմանն ու ամրապնդմանը:

Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել Յերիտկոմինտերնի խնդիրների լուսաբանությունը միության բոլոր օրգաններում:

Համագումարն անհրաժեշտ է համարում ուժեղացնել մասսայական շարժումը՝ յերիտասարդության կողմից օտարազգի լեզուներն ուսումնասիրելու համար:

Լենինյան ամբողջ Կոմյերիտմիությունը պետք է ե՛լ ավելի բարձրացնի իր պատասխանատվությունը Յերիտկոմինտերնի համար, վորպես նրա կարեվորագույն և ամենաուժեղ սեկցիան, վոր աշխատում և զարգանում է պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում:

Լենինյան ամբողջ Կոմյերիտմիությունը պետք է ե՛լ ավելի, քան մինչեվ այժմ, ամրապնդի իր կապն արտասահմանում գտնվող յեղբայրական սեկցիաների հետ, վորպեսզի ոգնի նրանց ամենակարճ ժամանակամիջոցում ձեռք բերել վճռական հաջողություններ բանվոր յերիտասարդության մեծամասնությունը նվաճելու գործում:

---

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱՁԱՅՆ)

Հնգամյակի վերջին ԽՍՀՄ-ի կոլեկտիվացումը հիմնականում վերջացած պետի լինի:

Ի. ՍՏԱԼԻՆ

### I

Համ. ԼԿՅԵՄ-ի VIII համագումարից հետո մինչեվ այժմ, ավելի և ավելի սրվող դասակարգային պայքարի պայմաններում Խորհրդային Միությունը ձեռք



է բերել խոշորագույն հաջողություններ, հսկայական կերպով աճել է և մտել սոցիալիզմի շրջանը: Սոցիալիստական արդյունաբերության տեսակարար կշիռն սկսում է արդեն գերիշխել գյուղատնտեսության տեսակարար կշռի վրա, և ԽՍՀՄ-ն գտնվում է ագրարային յերկրից ինդուստրիալ յերկրի փոխարկվելու նախօրեյին: Հիմնվելով ծանր ինդուստրիայի զարգացման բարձր տեմպերի իրագործման վրա, վոր բանալին է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, նոր խորհտնտեսությունների հսկայական ծավալման վրա, պրոլետարիատի և գյուղացիական հիմնական մասսաների հետ ճիշտ փոխհարաբերությունների վրա, կուսակցությունը ձեռք բերեց գյուղացիական չքավորության յետևից նաև միջակների հիմնական մասսաների շրջադարձը դեպի սոցիալիստական ուղին: Սրա հիման վրա կուսակցությունը գյուղի կապիտալիստական տարրերի սահմանափակման և տեղահանման նախկին քաղաքականությունից անցավ նոր քաղաքականության— կուլակության՝ վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա, լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությանը, ամբողջ փրոնտով սոցիալիստական հարձակման ծավալման քաղաքականությանը:

Ամբողջ ԽՍՀՄ-ում կոլտնտեսությունները միացրել են արդեն մոտ մի քառորդը, իսկ հիմնական հացահատիկային շրջաններում— մոտ կեսը բոլոր չքավոր-միջակային տնտեսությունների: Դեպի կոլտնտեսությունները ընթացող հոսանքի նոր ալիքը շարունակում է ե՛լ ավելի աճել:

Կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները

միասին, ընթացիկ տարում, տվին յերկրին ապրանքային հացի կեսը, դրանով իսկ լրացնելով և ծածկելով լիկվիդացիայի յենթարկված կուլակային տնտեսությունների հացահատիկի ապրանքային արտադրութը: Այս շրջադարձի հետ անմիջականորեն կապված՝ նոր ձևով դրված է Խորհրդային իշխանության հենարանի հարցը գյուղում:

«Սոցիալիստական հարաբերությունները ԽՍՀՄ-ում, վոր մինչև այժմ հենվում եյին գրեթե բացառապես սոցիալիստական արդյունաբերության վրա, այսուհետև սկսում են հենվել նաև գյուղատնտեսության մեջ արագորեն աճող սոցիալիստական սեկտորի վրա» (խոշոր արտադրություն կոլտնտեսությունների ձևով): «Այսուհետով ԽՍՀՄ-ի հացահատիկային կարևորագույն շրջաններում գյուղը բաժանվում է յերկու հիմնական մասերի.— կոլտնտեսականների, վորոնք հանդիսանում են Խորհրդային իշխանության իսկական և ամուր հենարանը, և վո՛չ կոլտնտեսականների՝ չքավորներից և միջակներից, վորոնք առայժմ դեռ ցանկություն չունեն մտնելու կոլտնտեսությունների մեջ, սակայն վորոնց՝ կոլտնտեսությունների մասսայական փորձն անկասկած կհամոզի կարճ ժամանակում կոլեկտիվացման ճանապարհի վրա կանգնելու անհրաժեշտությունը» (ՀամԿ(բ)Կ-ի XVI համագումար):

Համ. ԼԿՅԵՄ-ի IX համագումարը հատկապես անհրաժեշտ է համարում ընդգծել, վոր այս խոշորագույն հաջողությունները կուսակցությունը ձեռք է բերել Համ. Կ(բ)Կ-ի ԿԿ-ի լենինյան ճիշտ ղեկավարության հետեվանքով, վորպիսի ղեկավարությունն ամուր և հետևողականորեն անց է կացրել կուսակցության գլխավոր գիծը: ԿԿ-ի ղեկավարությամբ կուսակցու-



թյունը ձեռք է բերել իր շարքերի խոշորագույն մեծամասնության լենինյան հիմքերի վրա, պայքարելով աջ ոպորտունիզմի դեմ, վորպես գլխավոր վտանգի տվյալ ետապում, հակահեղափոխական տրոցկիզմի դեմ, «ձախ» կիսատրոցկիստական հարձակումների դեմ՝ կուսակցության գծի վրա և դեպի այդ թեքումները հաշտվողական վերաբերմունք ցուցահանողների դեմ:

Ամբողջ ֆրոնտով ծավալվող սոցիալիստական հարձակումն անխուսափելիորեն առաջ է բերում դասակարգային պայքարի սրում և կուլակային ագենտուրայի— աջ ուկլոնիստների ակտիվացում: Աջ ուկլոնիստները և ձախական կիսատրոցկիստական տարրերը յերկերեսանիության և անսկզբունքային բլոկների ուղին դուրս յեկան աջ-ոպորտունիստական պլատֆորմայի հիման վրա: Այսպիսի դավաճանական հակակուսակցական վարմունքի փաստ է հանդիսանում Սիրցովի, Լոմինաձեյի, Շացկինի և մյուսների անսկզբունքային բլոկը: Նմանապես և անթույլատրելի յեն աջ ոպոզիցիայի նախկին առաջնորդների (Տոմսկի, Ռիկով և այլն) վարմունքը:

Կոմյերիտմիության խնդիրը կայանում է նրանում, վոր անհողդողդ ու անհաշտ կերպով և մինչև վերջը դիմակազերծ անի ոպորտունիստների այս նոր ռազմախաղերը, յեռանդուն կերպով ծավալելով պայքարը կուսակցության գլխավոր գծի համար, ընդդեմ աջ թեքման, վորպես գլխավոր վտանգի ներկա ետապում, ընդդեմ «ձախ» կիսատրոցկիստական խմբավորումների, աջ ոպորտունիստների դաշնակիցների, և ընդդեմ հաշտվողական վերաբերմունքի դեպի այդ տիպերը:

## II

1. Հողում համատարած կոլեկտիվացման, կուլակությունը, վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու մղվող դասակարգային սուր պայքարի այս շրջանում Կոմյերիտմիությունն ամբողջությամբ գրավեց ռազմական դիրքեր և ցուցադրեց իրեն, վորպես ակտիվ, նվիրված մարտնչող կուսակցության գլխավոր գծի ամուր և անշեղ անցկացման համար:

Կոմյերիտմիության համար այս շրջանը դասակարգային դաստիարակության մի խոշորագույն դպրոց եր, վորտեղ Կոմյերիտմիությունը գաղափարական-քաղաքական տեսակետից ե՛լ ավելի աճեց, ստուգեց և ամրապնդեց իր շարքերի կայունությունը, նշանակալից չափով մաքրվեց օտար և անկայուն տարրերից և կոփեց լայն կոմյերիտական մասսան՝ վորպես իսկական մարտիկներ սոցիալիզմի հաղթանակի համար:

2. 1930 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակ գյուղի կոմյերիտականների գրեթե կեսը ներգրավված եր կոլտնտեսությունների մեջ, 550.000-ից ավելի կոմյերիտականներ աշխատում եյին կոլտնտեսական դաշտերում:

Գյուղում Կոմյերիտմիությունն սկսում ե ցուցաբերել իրեն, ինչպես և ֆաբրիկաներում ու գործարաններում, վորպես առաջապահ հարվածային խումբ: Առանձին շրջաններում, հատկապես այնտեղ, վորտեղ կուսակցական բջիջներ չկան, Կոմյերիտմիությունն սկսում ե կոլտնտեսություններում ղեկավար դեր խաղալ ցանքի, բերքահավաքի, հացամթերումների ընթացքում, տանելով իր յետևից կոլտնտեսական յերիտասարդությանը և ցուցաբերելով հարվածային աշ-



խատանքի և աշխատանքային ենտուզիազմի որինակներ:

Սակայն դեռ մինչեվ այժմ գյուղական միշարք բջիջներում տեղ ունեն աջ-ոպորտունիստական տրամադրություններ, կոլտնտեսական շարժման ուժերին չհավատալու արտահայտություններ, կուլակի դեմ անձնատուր լինելու տարրեր: Գյուղական կազմակերպությունների պրակտիկայում մինչև այժմ էլ դեռ արտահայտվում են նաև հակամիջակային ձախական ար-
բամադրություններ, վոր արհամարհում են միջակի
հետ դաշինքն ամրապնդելու քաղաքականությունը:

Կոմյերիտմիությունը գյուղում ավելի և ավելի ցույց է տալիս իրեն, վորպես կուսակցության ակտիվ օգնական կոլտնտեսությունները և աշխատանքի կար-
գապահությունը նրանցում ամրապնդելու գործի մեջ:
Սակայն մինչև այժմ մի ամբողջ շարք վաս-
բերում կոմյերիտականները թույլ են ցուցա-
գրում իրենց կոլտնտեսություններում՝ ինչպես
աշխատանքի կարգապահության համար մղվող պայ-
քարի տեսակետից, այնպես էլ մանավանդ Կոմ-
յերիտմիությունը գյուղերում դեռ չափազանց
թույլ է ծավալում կոլտնտեսության տնտեսական-
կազմակերպչական աշխատանքի նյության մեջ, թույլ
կերպով է մասնակցում կոլտնտեսության ղեկավարմա-
նը՝ պլանները կազմելու, աշխատանքի ճիշտ կազմա-
կերպման, կադրերի պատրաստմանն ու առաջքաշմանը,
յեկամուտների ճիշտ բաշխման, տեխնիկյան բարձրաց-
նելու, հողի մշակման լավագույն ձևեր մտցնելու, ար-
տադրության ձևերի և այլն տեսակետից:

Կոմյերիտական բջիջները գյուղերում դեռ մինչեվ այժմ էլ թույլ են իրականացնում իրենց դերը՝ վորպես

յերիտասարդության լայն մասսաների տնտեսության կազմակերպիչներ։ Սա հիմնականում բացատրվում է նրանով, վոր իրենք՝ կոմյերիտական բջիջները գյուղում մեծ մասամբ չափազանց յետ են մնացել կոմյերիտականների կուլտուր-քաղաքական մակարդակը բարձրացնելու իրենց աշխատանքի մեջ։ Սա պահանջում է վճռականապես և արմատապես բարելավել ամբողջ բողջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքը։

3. Կոմյերիտմիությունը, վորը գյուղում դաստիարակում է իր շարքերում սոցիալիզմի համար մարտնչող հարյուր հազարավոր մարտիկներ, ներկա շրջանում իր ամբողջ գործունեությամբ բարձրանում է մի նոր, ավելի բարձր աստիճան։ Յեթե նախկին տարիներում գյուղական կոմյերիտական կազմակերպությունն իր մեծ մասով կազմված եր իրենց անհատական տնտեսությունը վարող գյուղացիներից (չքավորներից և միջակներից), ապա ներկայումս բուռն աճման մոմենտին, յերբ այդ կոլեկտիվացումը միլիոնավոր անդամներ է ընդգրկել, գյուղի կոմյերիտմիությունը իր կազմով ավելի և ավելի յե դառնում հիմնականում կոլտնտեսական յերիտասարդության կազմակերպություն։

Դրանով հենց գյուղական կոմյերիտմիության մակարդակը, նրա ամբողջ տնտեսական-կենցաղային դրվածքը հիմնովին փոխվում են և դարձնում են նրան ավելի ակտիվ, ավելի ընդունակ կոմունիստական հոգով դաստիարակելու գործում։ Կոմյերիտականի աճումը վորպես կոմունիստի թեթևանում է նրանով, վոր հենց կոլտնտեսական շարժումն ինքն էլ ընթանում է կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու համար մղվող բաց և սրված պայքարի պայմաններում։



4. Յերկրում մղվող դասակարգային պայքարի սրումն իր արտացոլումը գտավ նաև յերիտասարդության մեջ։ Կուլակը, վորը աշխատում է ամեն տեսակի ձևերով և մեթոդներով կազմակերպել իր ուժերը հակահարված տալու Խորհրդային իշխանության քաղաքականությանը, փորձում է իր իդեոլոգիական ազդեցությամբ խորամուտ լինել յերիտասարդության տարբեր խավերի մեջ և կազմակերպել իր ագենտուրան նույնիսկ կոմյերիտմիության միջավայրում։ Մասնավորապես յերիտասարդության վրա ազդեցություն ձեռք բերելու համար կուլակության մղած պայքարն արտահայտվում է յերիտասարդության կրոնական աղանդավորական կազմակերպություններ ստեղծելու և յերիտասարդության մեջ ազգային ատելություններ բորբոքելու փորձերի մեջ։

Համագումարը վճռականապես դատապարտում է յեղած առանձին տրամադրությունները համատարած կոլեկտիվացման շրջաններում դասակարգային պայքարը դադարեցնելու մասին։ Դասակարգային թշնամին փորձում է դասակարգային պայքարի տարրերը փոխադրել կոլտնտեսություն, մի շարք դեպքերում մուտք գործելով կոլտնտեսությունների մեջ, նա փորձում է բորբոքել պոկողական տրամադրությունները, կազմակերպել ընդդիմություն աշխատանքի ճիշտ կազմակերպման դեմ, յեկամուտների ճիշտ բաշխման դեմ և այլն, ողտագործելով այդ կոլտնտեսական շարժման դեմ մղվող պայքարի համար։

Կոմյերիտմիության խնդիրը կայանում է նրանում, վոր կուսակցության գլխավոր գծի համար մղած իր պայքարում, դասակարգային թշնամու դեմ մղած իր պայքարում ամբողջ փրոնտով ծավալի գաղափարական և

կազմակերպչական հարձակում նվաճելու համար կոլտնտեսական-գյուղացիական յերիտասարդության ամբողջ բանվորական և հիմնական մասսան լենինյան կոմյերիտմիության ղեկավարության և դրոշի տակ: Այս խնդիրը կոմյերիտմիությունը պիտի վճռի վո՛չ միայն ուժեղ կերպով ծավալելով ագիտացիոն-պրոպագանդիստական և կուլտուրական աշխատանքը մասսաների մեջ, այլև նրանով, վոր կոմյերիտմիությունը վոչ միայն իր առաջապահ մասով, այլ միության անդամների ամբողջ յերեք միլիոնանոց մասսայով՝ ծավալի և՛լ ավելի ուժեղ գործնական աշխատանք անցկացնելու կուսակցության XVI համագումարի վորոշումները՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսական շարժման ամրացման ու լայնացման, կուլակության վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացիայի յենթարկելու վերաբերմամբ:

## III

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

1. Վճռականապես պայքարելով կոլեկտիվ շարժման մեջ արտահայտվող ինքնահոսի տեսակետի և գործնականի դեմ, չթույլատրելով խոտորումներ, կոմյերիտմիությունը պետք է նշանակալից չափով ուժեղացնի իր աշխատանքը չքավոր ու միջակ տնտեսությունների մեջ, յենթարկելով այդ աշխատանքը չքավորներին և միջակներին կամավորության հիմունքներով կոլտնտեսությունների մեջ ներգրավելու խնդրին, կոնկրետ փորձով ապացուցելով կոլտնտեսությունների առավելությունները միանձնյա տնտեսությունների



հանդեպ, ղեկավարվելով այն բանով, վոր «հնգամյակի վերջին ԽՍՀՄ-ի կոլեկտիվացումը հիմնականում վերջացած պիտի լինի» (Ստալին):

Գյուղական կոմյերիտականի նվիրվածությունը սոցիալիզմին, ամենից առաջ, չափվում է նրա կոլտնտեսություն մտնելով և կոլտնտեսությունն ամրացնելու համար նրա տարած ակտիվ աշխատանքով:

Համագումարը համարում է, վոր մոտակա շրջանում կոմյերիտմիության մարտական, ամենասուր խնդիրը պետք է լինի.—ձգտել բոլոր կոմյերիտականներին իրոք գլխովին ներգրավելու կոլտնտեսությունների մեջ, առաջին հերթին—ամենակարճ ժամանակամիջոցում—համատարած կոլեկտիվացման շրջաններում, և անմիջապես ստեղծելու կոմյերիտականներից, չքավոր-միջակային յերիտասարդությունից և չափահաս գյուղացիությունից ինիցիատիվ խմբակներ՝ կոլտնտեսություններ կազմակերպելու համար այն շրջաններում, վորտեղ դեռ տարածված չե համատարած կոլեկտիվացումը:

2. Համագումարը պարտավորեցնում է կոմյերիտմիության կոմիտեներին ապահովել իր ղեկավարությամբ այս ընդհանուր ներգրավումը և հետևել այն բանին, վորպեսզի կոլտնտեսությունների մեջ մտնելուց չարամտորեն խուսափողները, կոմյերիտմիության գիծն արհամարհողները, կոլտնտեսությունները ստեղծելուն դեմ դուրս յեկողները—անմիջապես վտարվեն կոմյերիտմիությունից՝ վորպես կուլակի ակնհայտ գործակալներ կոմյերիտմիության մեջ:

Այն շրջաններում վորտեղ դեռ տարածված չե համատարած կոլեկտիվացումը, կոմյերիտմիությունը պետք է ծավալի համառ և անհողդողդ աշխատանք՝

կազմակերպելու համար կոլտնտեսություններ, գյուղատնտեսական արտելներ՝ որպես կոլտնտեսական շարժման հիմնական տեսակներ տվյալ էտապում:

Այս նպատակով անհրաժեշտ է ամրապնդել և լայնացնել արդեն ստեղծված կոլտնտեսությունները և նոր կոլտնտեսություններ կազմակերպելու համար ստեղծել ինիցիատիվ խմբակներ, լայն կերպով բացատրելով գյուղացիական մասսաներին, վաղվա կոլտնտեսականներին, այն առավելությունները ու արտոնությունները, որ պետությունը վերապահել է կոլտնտեսականներին և կոլեկտիվ տնտեսություններին, հետևելով նրանց կանոնավոր և լրիվ իրացմանը, ձգտելով զանազան ձևի ամենահասարակ գյուղատնտեսական կոոպերատիվ—արտադրական ընկերությունների անցմանը գյուղատնտեսական արտելների կանոնադրության:

3. Համագումարն առաջարկում է կոմյերիտական բոլոր կազմակերպություններին խիստ կերպով առաջնորդվել ազգային հանրապետությունների և մարզերի առանձին շրջանների կոլեկտիվացման առթիվ տարվելիք աշխատանքի առանձնահատկությունների մասին Համ. Կ(բ)Կ XVI համագումարի տված ցուցմունքներով: Ազգային հանրապետությունների կոմյերիտականները, մանավանդ անասնաբուծական շրջաններում, պետք է անդուլ աշխատանք թափեն լայն կերպով զարգացնելու արտելի հետ միասին, որպես կոլեկտիվացման հիմնական ձև տվյալ էտապում, նաև կոլեկտիվացման ամենապարզ ձևերը—հողը միասին մշակելու ընկերություններ, գյուղատնտեսական կոոպերացիա—աջակցելով թափառական ազգությունների աշխատավոր-



ների տնտեսությունները վերափոխել նստակյացների կոլեկտիվացման հիման վրա:

4. Ձգտել աշխատանքի օրինակելի կազմակերպման խորհտնտեսություններում և մանավանդ մեքենա-տրակտորային կայաններում, ակտիվ կերպով մասնակցելով կադրերի ստեղծմանը (համալրում, նախապատրաստում) լավագույն կոմյերիտականներից: Անհրաժեշտ է հետևել տրակտորների կանոնավոր օգտագործմանը, ժամանակին նրանց վերանորոգման յենթարկելուն, հմտությամբ և խնայողաբար վերաբերվելով մեքենաներին և գյուղատնտեսական ինվենտարին, կազմակերպելով մասսայական լայն հասարակական աշխատանք ՄՏԿ-ների շուրջը:

5. Կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են ակտիվ կերպով օգնել կուսակցությանը՝ ամրապնդելու և հետագայում էլ իրագործելու խորհուրդների՝ յերեսով դեպի կոլտնտեսական շինարարությունը աշխատանքի շրջադարձը, բարձրացնելու խորհուրդների դերը խորհրդային առանձին օրգանների աշխատանքի պրակտիկայում օպորտունիզմի դեմ պայքարելու կուսակցության գիծն անցկացնելու մեջ: Վճռականապես պայքարելով լիկվիդատորական այն տրամադրությունների դեմ, որոնք համատարած կոլեկտիվացման շրջաններում թերագնահատում են խորհուրդների՝ որպես պրոլետարական դիկտատուրայի օրգանների՝ դերը, անհրաժեշտ է ներգրավել կոմյերիտական-կոլտնտեսականներին, բատրակա-չքավորական և միջակային յերիտասարդությանը խորհուրդների և նրանց սեկցիաների աշխատանքի մեջ, նրանցից խորհուրդների շուրջն ակտիվ կազմակերպելով: Բջիջներն ու Համ. ԼԿՅԵՄ-ի կոմիտեները պարտավոր են լայն

կերպով դնել հասարակական աշխատանքում ստուգված կոմյերիտականներից և յերիտասարդությունից (առաջին հերթին բատրակներից և կոլտնտեսականներից) խորհուրդների մեջ ղեկավար աշխատանք տանելու համար կադրեր առաջ քաշելու հարցը:

6. Կուսկազմակերպությունների ղեկավարությամբ ուժեղացնել բատրակության ու չքավորության կազմակերպելու աշխատանքը, ձեռք առնելով իրական միջոցներ լավացնելու գյուղխորհուրդներին, կոոպերացիային, կոլտնտեսությունների ամենահասարակ ձևերին և այլն կից չքավորների և բատրակների խմբակների աշխատանքը, ձգտելով, որ կոմյերիտմիության բջիջները ակտիվ աջակցություն ցույց տան և ամեն կերպ ոգնեն չքավորական խմբակներին: Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը չքավորության և բատրակության մեջ տարվող աշխատանքի թերագնահատության դեմ, որպես աջ օպորտունիզմի ամենավտանգավոր արտահայտությունների դեմ:

## IV

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

Կոլտնտեսական շինարարության վճռական խնդիրներից մեկն է հանդիսանում աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում: Հետևապես կոլտնտեսական բջիջի տնտեսական-արտադրական աշխատանքի հետագա ուժեղացումը նշանակում է ամենից առաջ բջիջի մասնակցության բարձրացում աշխատանքի կազմակերպման պրոբլեմը լուծելու մեջ: Վճռական պայքար մղելով կոլտնտեսության մեջ կուլակային ազդեցության մուտք գործելու դեմ, համառ կերպով հաղթահարելով ամեն տեսակի մանր-սեփականատիրական տրամադրություններ և դաստիարակելով մասսաների մեջ կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, բջիջը պարտավոր է.—



ա) իմանալ կոլեկտիվ տնտեսությունը, նրա ուղղությունը, նրա բոլոր ցուցանիշները, հաջողությունները և հիվանդագին տեղերը.

բ) իմանալ կոլտնտեսության արտադրական առաջադրությունները և նրանց իրագործման կարգը:

Միայն սրա հիման վրա բջիջը կարող է և պարտավոր է.—

1. Դառնալ պլանային աշխատանքի ինիցիատոր կոլխոզում, ձգտելով տնտեսական աշխատանքի տարեկան և կվարտալային պլանների կազմելուն, ապահովելով այդ պլանների մեջ կուսակցության գծի գործնական արտացոլումը ցանքային տարածությունների լայնացման, անասնաբուծության, տեխնիկական կուլտուրաների և այլն զարգացման նկատմամբ, բանվորական պլանը հասցնելով մինչև յուրաքանչյուր կոլտնտեսականը, յուրաքանչյուր բրիգադը, հողամասը և գործարանների օրինակով ծավալելով շարժումը հանդիպական գյուղատնտեսական պլանների համար:

2. Ձգտել բանվորական ուժի, քաշող ուժի, ինվենտարի ճիշտ դասավորմանը, աշխատանքի արտադրողականության, աշխատանքային կարգապահության բարձրացմանը, մեքենայական տեխնիկայի տիրապետելուն և կոլտնտեսական գույքին խնամքով վերաբերմունք ցույց տալուն:

3. Լայն ծավալել սոցմրցակցությունն ու հարվածայնությունը: Բջիջները պետք է դառնան գործարան-

ների և կոլտնտեսությունների, առանձին կոլտնտեսությունների, կոլտնտեսական տնտեսության սեկտորների (դաշտավարություն, անասնապահություն, բանջարաբուծություն և այլն) միջև կնքվելիք սոցիալիստական մրցակցության նախաձեռնողներ և կազմակերպիչներ. վորպիսի մրցակցությունը պիտի լինի լավորակ հերկի, բերքի արագ կալսելու և հավաքելու, անասուններին լավ խնամելու և այլ աշխատանքների համար, կիրառելով պլանային-օպերատիվ խմբակներ, հասարակական բուքսիր, խմբակներ կազմակերպելու ձևերը, դարձնելով այս բոլոր միջոցառումները մասսաների իրական շարժում ընդդեմ կուլակների և իր ագենտուրայի՝ ինչպես կոլտնտեսության ներսում, այնպես և կոլտնտեսությունից դուրս:

4. Դառնալ արտադրական խորհրդակցությունների ակտիվ մասնակիցներ, ձգտելով, վոր այդ խորհրդակցությունները դառնան սոցմրցակցության կազմակերպչական կենտրոններ, ստեղծելով այդպիսիները լոտ տնտեսության առանձին սեկտորների, լայն ծավալելով փորձագետների, ռացիոնալիզատորների, գյուտարարների, գիտական հաստատությունների ղեկավարության տակ աշխատողների խմբակներ, կազմակերպելով սիստեմատիկ պայքար կոլտնտեսությունների տնտեսական կորուստների դեմ:

5. Ակտիվ մասնակցություն ունենալ կոլտնտեսություններում յեկամուտը բաշխելու գործում, պայքարելով կուսակցության և կառավարության դիրեկտիվների խեղաթյուրման դեմ և բացատրական աշխատանք տանելով կոլտնտեսությունների առավելությունների մասին նրանց յեկամուտների բաշխման հետևանքների հիման վրա:



6. Խիստ վերահսկողություն սահմանել կոմյերիտականների կողմից իրենց արտադրական պարտականությունների կատարման վրա, պահանջելով յուրաքանչյուր կոմյերիտականից օրինակելի աշխատանք, և կոլտնտեսություններում նկատված նեղ տեղերը լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտության դեպքում կազմակերպել հատուկ բրիգադաներ առաջավոր կոմյերիտականներից:

Յուրաքանչյուր կոմյերիտ-կոլտնտեսական պետք է լինի գյուղի սոցիալիստական վերակառուցման գործի համար մասսաների կազմակերպողը, քաղաքականապես հարվածային, մշակման ռեկորդային նորմաներ տվող ռացիոնալիզատոր:

7. Իր աշխատանքի կենտրոնում դնելով արտադրության խնդիրները, լայն կերպով ծավալել կուլտուրական աշխատանքը այնպես, վոր այդ աշխատանքը օգնի կոլտնտեսության տնտեսապես ամրապնդվելուն: Անհրաժեշտ է.—

ա) ամենակարճ ժամանակամիջոցում ապահովել անգրագետ և կիսագրագետ կոմյերիտականներին և ընդհանրապես կոլտնտեսականներին գրագիտություն սովորեցնելը·

բ) ձեռներեցություն ցուցաբերել կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարության մեջ, հաշվի առնելով այդ խնդրում կոլտնտեսությունների տնտեսական հնարավորությունները·

գ) կազմակերպել կոլտնտեսական յերիտասարդության աշխատանքից ազատ ժամերի կուլտուրական պահանջների սպասարկումը·

դ) ապահովել յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ ընդհանուր տարրական ուսում մտցնելու գործը,

ե) լայն աշխատանք ծավալել կոլտնտեսականների մեջ գյուղատնտեսությունն ու զոոտեխնիկան ուսումնասիրելու համար:

V

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսության վերակառուցումը, ինչպես նաև վերակառուցումը արդյունաբերության բնագավառում, վերջին տարիները յերևան յեկած կազմակերպված վնասարարությունը դասակարգային թշնամիների կողմից յերկրին առաջադրեցին վորպես սոցիալիստական շինարարության կենտրոնական, վճռական պրոբլեմ՝ կադրերի պատրաստությունը:

Արձանագրելով, վոր արդյունաբերական կադրերի պատրաստության գործում կոմյերիտմիությունը ակտիվություն ցուցաբերեց և լուրջ աջակցություն ցույց տվեց, Համագումարը կոմյերիտմիության աշխատանքը սոցիալիստական հողագործության համար կադրեր պատրաստելու բնագավառում համարում է անբավարար: Համագումարն այդ բնագավառում պակասավոր է համարում նաև հողային և կոլտնտեսական օրգանների աշխատանքը:

Համագումարը պարտավորեցնում է ԿԿ-ն և տեղական կազմակերպություններին, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և ՄՏԿ-երի համար անհրաժեշտ վորակյալ կադրերի պլանների հիման վրա, համապատասխան մարմինների հետ մեկտեղ ծավալել կադրերի պատրաստման համար լայն աշխատանք, նկատի ունենալով, վոր կոմյերիտմիությունը վոչ միայն պիտի դառնա նոր, սոցիալիստական հողագործության համար կադրեր կազմելու կարևորագույն աղբյուրը, այլ և այդ գործի նախամարտիկը:



2. Ներկայում չհրաժարվելով բանվորական ուժեր պատրաստելու կարճատև դասընթացների միջոցով կադրեր պատրաստելուց՝ վորպես պահանջ լրացնող արտակարգ միջոցառումից, Համագումարը համարում է, վոր ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը և գյուղատնտեսական տրեստները պարտավոր են լուրջ կերպով բարելավել կադրեր պատրաստելու գործի պլանավորումը և գործնականում ապահովել խորհտնտեսի դպրոցների ամրապնդումն ու ծավալումը՝ վորպես խորհտնտեսությունների համար կադրեր պատրաստելու հիմնական ձև:

3. Կոլտնտեսական կադրեր ստեղծելու աշխատանքի կենտրոնում անհրաժեշտ է դնել հենց իրենց կոլտնտեսականների մասսայից տնտեսապես փորձված կազմակերպիչների պատրաստումն ու առաջ քաշումը կոլտնտեսական տնտեսության առանձին ճյուղերի ղեկավարման համար (բրիգադիրներ, դաշտավարներ, բանջարաբուծներ, անասնաբուծներ և այլն):

Զարգացնելով կադրեր պատրաստելու այնպիսի միջոցները, վորպիսին են կոլտնտեսական յերեկոյան համալսարանները, գյուղատնտեսական հեռակա կրթությունը, խմբակների և ագրոկուրսերի ցանցը, անհրաժեշտ է ուժեղացնել կոլտնտեսական յերիտասարդության դպրոցների (ինչպես ցերեկվա, նույնպես և յերեկոյան) ծավալումը, այն հաշվով, վոր հնգամյակի վերջին հնարավոր լինի ընդգրկել այդ դպրոցներում կոլտնտեսական յերիտասարդության հիմնական մասսային, արագացնելով կոմյերիտդպրոցների վերակառուցումը կոլխոզներին կից նորմալ պոլիտեխնիկական յոթնամյակների և ապահովելով կոմյերիտդպրոցների մասնագիտացումը՝ համաձայն տվյալ շրջանի տնտե-

ության իշխող ճյուղի և կոլտնտեսություններում վա-
րակյալ կադրերի պահանջի:

Սրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ուժեղացնել կոմյե-
րիտմիության աշխատանքը գյուղատնտեսական միջնա-
կարգ և բարձրագույն դպրոցներում, ձգտելով ըստ հ-
նարավորին շուտ ռեալիզացիայի ենթարկել Համ.
Կ(բ)Կ-ի ԿԿ-ի պլենումի դիրեկտիվներն այդ բնագավա-
ռում (մասնագիտացում, ուսման վորակի բարձրացում,
պայքար անհարթապատ իդեոլոգիայի դեմ, հարվածայ-
նության և սոցմրցակցության, արտադրական պրակ-
տիկա և այլն):

4. Յերիտասարդության աշխատանքի հարցերը
կոլտնտեսություններում պիտի հպատակեցվեն կոլտն-
տեսությունների ամրապնդման խնդիրներին: Կոմյերիտ-
միությունը պիտի լինի առաջավոր մարտիկը աշխա-
տանքի արտադրողականությունը բարձրացնելու հա-
մար. միևնույն ժամանակ, չթույլատրելով դեռահաս-
ների օգտագործումը նրանց ուժերից վեր աշխատանք-
ներում, կոմյերիտմիությունը պիտի ձգտի, վոր դե-
ռահասները կարգավորված ձևով օգտագործեն իրենց
հանգստի օրերը և չափահասների հետ միասին հավա-
սար աշխատանքի համար հավասարաչափ ել վար-
ձատրություն ստանան:

## VI

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄ. ԼԿՅԵՄ-Ի ԱՃՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Յերկրի ինդուստրացման արագ աճման, խորհ-
տնտեսությունների, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ե-
րի նշանակալից աճման, Համ. ԼԿՅԵՄ-ի քաղաքային
կազմակերպությունների կողմից գյուղականներին
ցույց տրվող աջակցության ուժեղացման և կոմյերիտ-



միության գյուղական կազմակերպությունների սոցիա-
լական կազմի լավացման հետ մեկտեղ միության գյու-
ղական մասի ղեկավարությունն էլ պրոլետարիատի
կողմից ամրապնդվեց, լավացավ և ընդարձակվեց նրա
բազան:

Ներկայումս գյուղական յերիտասարդությունը
պրոլետարիատի կողմից ղեկավարելն իրականացնելու
գործում Համ. ԼԿՅԵՄ-ը համատարած կոլեկտիվաց-
ման շրջաններում հենվում է կոլտնտեսությունների
վրա—խորհրդային իշխանության այդ իսկական և ա-
մուր հենարանի վրա գյուղում և այն շրջաններում, վո-
րոնք դեռ չեն ընդգրկված համատարած կոլեկտիվաց-
մամբ, չքավորության—վաղվա կոլտնտեսականների
վրա:

Սրանից յելնելով, Համ. ԼԿՅԵՄ-ն պարտավոր է
նշանակալից չափով ուժեղացնել կոլտնտեսական առա-
ջավոր յերիտասարդության ընդգրկումը կոմյերիտ-
միության մեջ:

2. Միության գյուղական կազմակերպությունների
մեջ տեղի ունեցավ անչափահասների կազմի նշանակա-
լից բարձրացում ի հաշիվ յերիտասարդության թույլ
կերպով աճման հետ մեկտեղ, նվազեց կուսշերտավո-
րումը. և կոլտնտեսական առաջավոր յերիտասարդու-
թյունը միության կողմից բավարար չափով չի ընդ-
գրկվում:

Համագումարն այս հանգամանքի վրա յե հրավի-
րում բոլոր կազմակերպությունների հատուկ ուշադրու-
թյունը և խնդիր է դնում լայնացնել կոմյերիտմիու-
թյան գյուղական բջիջների ցանցը, ձգտելով առաջիկա
կես տարում ամեն մի խորհտնտեսության և կոլտնտե-
սության կից ստեղծել բջիջ և ուժեղացնել նրանց ա-

ճումը ի հաշիվ յերիտասարդության: Համագումարը կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում է միության աշխատանքն ու աճումը ի հաշիվ աղջիկների նշանակալից չափով ուժեղացնելու անհրաժեշտության և նրանց ավելի վճռական կերպով ղեկավար աշխատանքի առաջ քաշելու վրա:

3. Համատարած կոլեկտիվացման շրջաններում միության աճումը գլխավորապես և առավելապես պիտի ընթանա ի հաշիվ կոլտնտեսական առաջավոր յերիտասարդության: Կոլտնտեսականներից միության մեջ ընդունել, անհատական ընտրության հիման վրա, կոլտնտեսական գործին իսկապես ավելի շատ նվիրված՝ հասարակական աշխատանքի այն օրինակելի աշխատավորներին, վորոնք ստուգված են հասարակական աշխատանքի մեջ, կուլակի դեմ պայքարի մեջ, վորոնք ավելի լավ են աշխատում արտելային, քան թե միանձնյա տնտեսության մեջ:

Այն շրջաններում, վորոնք դեռ ևս չեն ընդգրկված համատարած կոլեկտիվացմամբ, անհրաժեշտ է ձգտել առաջավոր կոլտնտեսականների և չքավորների լայն ներգրավմանը:

Միջակ–միանձնյաների նկատմամբ համատարած կոլեկտիվացմամբ չընդգրկված շրջաններում անհրաժեշտ է ընդունել ամենալավ սակավազոր միջակ յերիտասարդության միայն այն մասին, վորը նվիրված է կուսակցության շահերին, վճռականապես պայքարում է դասակարգային թշնամու դեմ, ամուր կանգնած է կոլտնտեսությունների կազմակերպման համար և իր հասարակական ակտիվ աշխատանքով կոլտնտեսական շարժման աճման համար պայմաններ է ստեղծում:



4. Բանվորա-գյուղացիական յերիտասարդության մասսաներին դասակարգային պայքարի սրվածության այս պայմաններում սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու և նրա կոմունիստական դաստիարակության ուժեղացման խնդիրը վճռականապես հարց է դնում կոմյերիտմիության կուսղեկավարության հետագա ծավալման և պրոլետարական ազդեցությունը միության գյուղական մասի վրա ապահովելու մասին. Միաժամանակ կոմյերիտմիությունը պետք է իր աշխատանքը ե՛լ ավելի կապակցի կուսակցության միջոցառումների հետ, ընդհանրացնի իր փորձը, օգնելով կուսակցության ընդհանուր աշխատանքը լավացնելու գործում ցուցաբերած իր ձեռներեցությամբ, մանավանդ՝ գյուղում:

Համագումարը մատնանշում է, վոր պրոլետարական ղեկավարությունը կոմյերիտմիության մեջ ապահովվում է—կոմյերիտմիության աշխատանքի մեջ կուսակցական ճիշտ գծի կիրառմամբ, կուսակցական միջակի սիստեմատիկ բարձրացմամբ, միության պրոլետարական մասի բարձրացող նշանակությամբ, բանվոր և բատրակ յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ հարյուր տոկոսով ներգրավելու լոզունգի իրականացմամբ և կոմյերիտական ակտիվի կուսակցական տոկոսությամբ:

Կոմյերիտմիության բջիջների աշխատանքը կուսակցական ղեկավարության հետագա լավացումը գյուղում և մանավանդ այնտեղ, ուր կուսբջիջներ չկան, գյուղում կոմյերիտմիության կուսակցական միջուկի մեծացումը առաջին հերթին պիտի ընթանան կուսակցության աճման ուժեղացման ճանապարհով ի հաշիվ լա—

վագույն կոմյերիտականների գյուղատնտեսավորներից, բատրակներից, կոլտնտեսականներից և չքավորներից:

5. Գավառների լիկվիդացիան և տնտեսական-քաղաքական ամբողջ աշխատանքի ծանրության կենտրոնը շրջանները փոխադրելը պահանջում են ամեն կերպ իրենց ամրապնդումը:

Մինչդեռ, չնայած այն նշանակալից աշխատանքին, վոր կատարել է միությունը շրջանների ամրացման նկատմամբ («500»-ուղարկելը, քարտուղարների կուրսերը և միջոցառումներ), այնուամենայնիվ կոմյերիտմիության մի շարք շրջկոմներ դեռ չեն կարողացել տիրապետել այն նոր խնդիրների ամբողջ հանրագումարին, վորոնք դրված են գյուղի կոմյերիտմիության առջև,—նրանց ղեկավարությունն ու օգնությունը բջիջին դեռ անբավարար են:

Իրականացնելով կոմյերիտական կազմակերպությունների բոլշևիկորեն ղեկավարելու գործը, շրջկոմները պետք է իրենց գլխավոր ուշադրությունը կենտրոնացնեն իրականորեն կենդանի կապի և բջիջներին օգնելու խնդրի վրա, ապահովեն ինքնաքննադատության և ներմիութենական դեմոկրատիայի՝ վորպես միութենական ղեկավարության հիմնական մեթոդների լայն ծավալումը: Համագումարն ընդգծում է, վոր միության ղեկավար մարմինները վերին աստիճանի թույլ են ուսումնասիրում գյուղի դրությունը և դեռ անբավարար չափով են վերակառուցել շրջաններին օգնելու իրենց աշխատանքը (դեռ ևս բացակայում է դիֆերենցիացիայի յենթարկված ղեկավարությունը):

6. Բանվորների և բատրակների առաջ քաշման



հետ զուգընթաց անհրաժեշտ է ղեկավար աշխատանքի համար առաջ քաշել առաջավոր ակտիվ կոլտնտեսականներին (հարվածայինների, ռացիոնալիզատորների, փորձագետների), այսպես կազմակերպելով ակտիվի տնտեսական ուսուցումը, վոր նա կարողանա տալ ակտիվին վոչ միայն իր շրջանի տնտեսական զարգացման հեռանկարների հասկացողությունը, այլ և կապի այդ հեռանկարները կուսակցության ընդհանուր քաղաքականության հետ: Պետք է անխնա կտրել ղեկավարությունից չատախոսներին և ցուցական մասսայականության կազմակերպողներին: Ակտիվիստը նա յե, ով ամենալավ աշխատավորն է կոլտնտեսության դաշտերում, ով աշխատանքի ժամանակ կազմակերպում է մասսաներին, ով աշխատանքի ժամանակ կազմակերպում է մրցակցություն, ով գործով ամրապընդում է կոլտնտեսությունը, ով հասարակական աշխատանքը ուղեկցում է իր քաղգրագիտության բարձրացմամբ:

7. Նշելով գյուղական կոմյերիտականի մեծ քաղանգրագիտությունը և Համ.ԼԿՅԵՄ-ի կոմխմբերի այս ուղղությամբ տարած վոչ բավարար աշխատանքը, համագումարը վորոշում է.—

Պարտավորեցնել բոլոր կազմակերպություններին վեց ամսվա ընթացքում լիկվիդացիայի յենթարկել գյուղի կոմյերիտականների քաղանգրագիտությունը:

Համագումարը հանձնարարում է կոմյերիտմիության ԿԿ-ին կազմակերպել քաղաքի կոմյերիտմիության օգնության գործը և վեց ամսից հետո խիստ կերպով ստուգել այս վորոշման իրագործումը:

Մշտական աշխատանքի համար մոբիլիզացիայի

յնթարկել արդյունաբերական կենտրոններից 500 ամենալավ պրոպագանդիստի:

Միջոցներ ձեռք առնել ապահովելու Համ. ԼԿՅԵՄ գյուղական բոլոր բջիջներին քաղուսուցման գրականությամբ:

Լայն կերպով պրակտիկայնել գյուղի կոմյերիտակտիվի վերապատրաստությունը:

Պարտավորեցնել Համ. ԼԿՅԵՄ-ի բոլոր ֆաբրիկա-գործարանային և քաղաքային բջիջներին՝ օգնելու գյուղական բջիջներին, նրանց վրա շեֆություն վերցնելու միջոցով, կոլեկտիվացման գործում նրանց կատարած աշխատանքի մեջ, կոլտնտեսության մեջ արտադրական աշխատանքի դրվածքի գործում, նրանց քաղաքական դաստիարակությունը կազմակերպելու մեջ, այս նպատակով ուղարկելով ամենալավ ակտիվիստներին մշտական կամ ժամանակավոր աշխատանքի շեֆարկյալ բջիջը, կազմակերպելով անհրաժեշտ նյութական օգնությունը, առաջին հերթին գրականության վերաբերմամբ և այլն:

Պրոլետարական շեֆ— կազմակերպությունները պետք է պատասխանատվություն կրեն շեֆարկյալ բջիջների գործերի դրության նկատմամբ:

Համագումարը համարում է, որ բանվոր-կոմյերիտականները պարտավոր են և կարող են հեղափոխական իսկական առաջնորդող դեր կատարել կոմյերիտմիության աշխատանքը գյուղում նոր, բարձր աստիճանի բարձրացնելու գործի մեջ:

Բոլշևիկյան կուսակցության և իր ԿԿ-ի փորձված ղեկավարության տակ լենինյան կոմյերիտմիությունը էլ ավելի մեծ ուժով և եռանդով կառուց-



նորքի բանվորա-գյուղացիական յերիտասարդության միլիոնավոր մասսաներին՝ վերջնականապես վոչընչացնելու կապիտալիզմի մնացորդներին գյուղում:

## ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՆՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված է միաձայն)

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը, խորտակելով կապիտալիստական հարաբերությունների ամբողջ համակարգը, ազատագրելով կապիտալիզմի ճնշումից աշխատավորներին, անջատելով յեկեղեցին պետությունից, լիկվիդացիայի յենթարկելով կաստայական դպրոցը, ազատելով կանանց ստրկական վիճակից, դեկրետելով հեղափոխական աշխատանքային օրենսդրությունը, փոխեց յերեխաների դրությունն ընտանիքի և պետության մեջ և պայմաններ ստեղծեց աճող սերնդից դաստիարակելու համար նոր մարդիկ, վորոնք ազատագրված են իրենց այլանդակող կապիտալիստական արտադրությունից և սովորույթներից և կոչված սկսել ու վերջացնել կոմունիզմի կառուցումը: Սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքով այդ խնդիրը ռեալիզացիայի յե յենթարկվում չտեսնված արագ տեմպերով: Սոցիալիզմի կողմերը բազմապատկվում են և աճում ինչպես ի հաշիվ աշխատավոր մասսաների հետագա ակտիվացման, այնպես և ի հաշիվ բոլշևիկների աճող յերիտասարդ սերունդների (կոմյերիտներ, պիոներներ):

2. ԽՍՀՄ-ի մտնելը սոցիալիզմի շրջանի մեջ, հսկայական սոցիալ-տնտեսական և կուլտուրական տեղաշարժերը, վորոնք հնգամյակի առաջին յերկու տարում յերկրում տեղի ունեցան շնորհիվ կուսակցու-

թյան և իր լենինյան ԿԿ-ի գլխավոր ճիշտ գծի, հասցրին յերեխաների դրության և պրոլետարական պետության կողմից նրանց մեջ տարվող աշխատանքի խիստ լավացմանը և ապահովեցին անցումը դեպի ընդհանուր տարրական կրթությունը և պոլիտեխնիզմի համար ծավալվող պայքարին:

*Այս ամենը առաջ բերեց յերեխաների քաղաքական ակտիվության հսկայական աճում և պայմաններ ստեղծեց աշխատավորության յերեխաներին ամբողջ մասսայից մասնակից դարձնելու սոցիալիստական շինարարությանը և ընդգրկելու նրանց պիոներական կազմակերպությունների մեջ: Դասակարգային պայքարի սրումը յերկրում հատկապես ուժեղ կերպով կուսակցության կոմյերիտմիության և պրոլետարական ամբողջ հասարակայնության առաջ է դնում յերեխաների կոմունիստական դաստիարակության բոլոր ոդակների ամրապնդման խնդիրը:*

3. *Համ. ԼԿՅԵՄ-ի VIII-ից մինչև IX-րդ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում պիոներկազմակերպությունների կողմից յերեխաների ընդգրկումը կրկնակի աճեց (պիոներական կազմակերպությունը մոտ 4 միլիոն անդամ ունի), և սրա հետ մեկտեղ նշանակալից չափով աճեցին պիոներկազմակերպության նշանակությունն ու տեսակարար կշիռը յերեխաների կոմունիստական դաստիարակության ամբողջ սիստեմի և խորհրդային իշխանության հասարակական քաղաքական կյանքի մեջ:*

*Արդյունաբերական շրջանների պիոներկազմակերպություններն այս ամբողջ ժամանակաշրջանում և մանավանդ Համ. ԼԿՅԵՄ-ի IV կոնֆերենցիայից ու*



*պիոներական համամիութենական հավաքից հետո կարողացան հիմնականում ներմուծվել սոցիալիստական շինարարության կարևորագույն մասերում մղվող ակտիվ պայքարի մեջ, իրենց առաջավոր ոդակներում ցուցաբերելով արդֆինպլանների համար մղվող պայքարի մեջ ակտիվ կերպով մասնակցելու օրինակներ:*

*Գյուղերում պիոներական ջոկատներն ավելացրին իրենց մասնակցությունը տնտեսական և կուլտուրական շինարարության կարևորագույն բնագավառների մեջ (կոլեկտիվացում, ցանքային կամպանիա, անգրագիտության վերացում, ընդհանուր ուսուցում և այլն), բայց պիոներկազմակերպությունը, գյուղում կազմակերպչորեն թույլ լինելով, դեռ չի տարածում իր ազդեցությունը յերեխաների լայն մասսաների վրա:*

4. Սակայն պիոներկազմակերպության վերջին յերեք տարում ձեռք բերած հաջողությունները այնուամենայնիվ վերին աստիճանի փոքր են, համեմատելով կազմակերպությունների աճման և վորակի բարելավման համար յեղած կարիքների ու հնարավորությունների և այն պահանջների հետ, վոր թելադրում է պրոլետարիատի սոցիալիստական հարձակման ամբողջ ընթացքը:

*Պիոներշարժման հիմնական թերությունները ինչպես գյուղում, նույնպես և քաղաքում հետևյալներն են.—*

*ա). Պիոներ կազմակերպությունը դեռևս չի կարողացել լրիվ չափով դառնալ յերեխաների մասսաներին սոցիալիզմի շինարարության մեջ ներգրավելու կազմակերպիչը, վորպեսզի նրանք մասնակցեն այդ ... թյանն ըստ իրենց ուժերի.*

բ)․ առանձին կազմակերպությունների անկարողությունը՝ կապելու ջոկատի պրակտիկ գործունեությունը շինարարության ընդհանուր խնդիրների հետ, պրոպագանդիստական և կուլտուր-մասսայական աշխատանքի թուլությունը մի շարք կազմակերպություններում․ հասցրին պիոներջոկատների տարած ամբողջ աշխատանքի դաստիարակչական նշանակության անկմանը․

գ)․ պիոներկազմակերպությունը միանգամայն անբավարար չափով է ղեկավարում յերեխաների մասսաներին դպրոցը պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցելու և ընդհանուր ուսուցումն անցկացնելու գործում, վորպիսի հանգամանքը թուլացնում է պիոներշարժման ուղեցույց դերը յերեխաների դաստիարակության բնագավառում։

5․ Համագումարը նշում է, վոր քաղաքական ճիշտ գծի և առանձին կազմակերպություններում կոմյերիտմիության կողմից ցուցաբերված գործնական ղեկավարության վորոշ չափով լավացման հետ միասին, այնուամենայնիվ, պիոներաշխատանքի ղեկավարությունը կոմյերիտմիության կոմիտեների և բջիջների կողմից մինչև այժմ էլ մնում է անբավարար, մանավանդ աշխատավորների ընտրության և պատրաստման բնագավառում։

Կոմյերիտմիության կողմից պիոներշարժման ղեկավարելը լավացնելու հիմնական պայմանը համարելով պիոներշարժման և յերեխաների մեջ տարվող ամբողջ աշխատանքի թերագնահատման դեմ վճռական պայքար մղելը, համագումարն առաջարկում է ԿԿ-ին և բոլոր տեղական կազմակերպություններին ապահովել



միության լրական շրջադարձը դեպի յերեխաների կոմունիստական դաստիարակության հարցերը։

Համագումարը մատնացույց է անում, վոր այդ շրջադարձը պետք է ընթանա ամենից առաջ պիոներներին և բոլոր յերեխաներին իրենց ուժերին համապատասխան ձևերով կոմյերիտմիության բջիջների ընդհանուր գործունեության մեջ քաշելու գծով և իրագործելի յե միայն պիոներշարժման անհրաժեշտ կադրերով ապահովելու, ստեղծագործական ձեռներեցության ակտիվության հետագա զարգացման և իրենց իսկ յերեխաների կազմակերպությունը յերեխաների համար կազմակերպություն դարձնող սխալ մեթոդների ղեկավարության դեմ պայքարելու պայմաններում։

6․ Համ․ ԼԿՅԵՄ-ի IX համագումարը գտնում է, վոր յերեխաների մեջ տարվող աշխատանքում կոմյերիտմիության հիմնական գիծը պետք է լինի դաստիարակության ամբողջ գործի կառուցումը՝ բոլոր յերեխաներին փաբրիկաների, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ի և կոլտնտեսությունների արտադրական ու հասարակական կյանքին սիստեմատիկ կերպով մասնակից դարձնելու հիման վրա։ Յերեխաների ներգրավումն արտադրողական աշխատանքի մեջ և ուսուցման կապն արտադրական աշխատանքի հետ հանդիսանում է վոչ միայն կոմյերիտմիության, այլ և հասարակական բոլոր կազմակերպությունների, մանավանդ սովետական ապարատի և պրոֆմիությունների վճռական խնդիրը։

Մոտակա ժամանակաշրջանի համար կոմյերիտմիության առաջ դրված են հետևյալ հիմնական խնդիրները․—

I. Հետզհետե յերեխաների ավելի շատ մասսաներ սոցշինարարության մեջ ներգրավելը և դաստիարակչական ամբողջ աշխատանքի վորակը բարձրացնելը.

ա). Հնգամյակի յերրորդ՝ վճռական տարվա արդֆինպլանի համար, հնգամյակը չորս տարում կատարելու համար մղվող պայքարում կուսակցության ու կոմյերիտմության պիոներկազմակերպության կողմից ցույց տրվելիք օգնության կազմակերպումը.

բ). Օգնություն կուսակցությանն ու կոմյերիտմությանը կուլակությանը վորպես դասակարգի համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացիայի յենթարկելու խնդրի իրականացման մեջ, պայքար՝ խորհտնտեսությունների, ՄՏՍ-ի և կոլտնտեսությունների արտադրական պլանների կատարման համար, հասակավորների և յերեխաների աշխատանքի ճիշտ կազմակերպման համար.

գ) Օգնություն՝ հասակավորների և դեռահասների անգրագիտության լիկվիդացիայի պլանները ինչպես քաղաքում, այնպես և գյուղում ամենաարագ կերպով կատարելու գործում, լրագիրը, գիրքը և ռադիոն դեպի բանվորի, կոլտնտեսականի ընտանիքն առաջ շարժելու մեջ, սանիտարական մինիմումն իրականացնելու մեջ և աշխատավորության կուլտուր-կենցաղային պահանջներն սպասարկելը լավացնելու համար ձեռք առնված միջոցներն անցկացնելու մեջ:

II. Բանվորների, բատրակների, չքավորների և կոլտնտեսականների յերեխաների մոտակա տարիներում հարյուր տոկոսով պիոներ կազմակերպության մեջ ներգրավելը:

Ելնելով սրանից, համագումարը վորոշում է յուրաքանչյուր արտադրական, խորհտնտեսական բը-



ջիջի կից ստեղծել պիոներ բազաներ, բոլոր կոլտնտեսական բջիջներին կից — պիոներջոկատներ:

Սոցիալիզմի հաղթական արշավն ամբողջ ֆրոնտով, կապիտալիստական վերջին դասակարգի լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման բազայի վրա, սոցիալիստական կուլտուրայի աճումը, սոցիալիզմի հիմքի ավարտումը հնգամյակի յերրորդ՝ թեակոխող տարում դնում են պիոներկազմակերպության առաջ ամբողջ հասակով աշխատավորների բոլոր յերեխաներին ընդգրկելու խնդիրը և սրա հետ մեկտեղ նաև ազ-դարձակության ուրիշ, ոչ աշխատավոր խավերի յերեխաների վերամշակումը, վերադաստիարակումը՝ այդպիսիներին դպրոցներին, ակումբներին և այլ մանկական հիմնարկություններին կից խմբակների յին ցանցի մեջ ներգրավելու միջոցով, թույլատրելով, վոր հասարակական աշխատանքի և սոցիալիզմի համար մղած պայքարում աչքի ընկածները մտնեն պիոներկազմակերպության շարքերը: Շարունակելով վճռական պայքար մղել ընդդեմ դասակարգային թըշնամու փորձերի՝ ազդեցություն գործելու յերեխաների և պիոներկազմակերպության վրա, մերկացնելով այդ փորձերը, նրանց դեմ պայքարը դարձնելով յերեխայական մասսաների սեփականությունը, անհրաժեշտ է հիշել և գործնականում խիստ կերպով առնել այն հանգամանքը, վոր պիոներկազմակերպությունն իր եությամբ հանդիսանում է վորպես մանկական դասակարգային-պրոլետարական կազմակերպություն, վոր աշխատում է կոմյերիտմության և կուսակցության ղեկավարության տակ:

III. Մանկության դաստիարակության ամբողջ սխ-

տեմը պոլիտեխնիզացիայի յենթարկելու, դպրոցը պոլիտեխնիկական հիմքի վրա արմատապես վերակառուցելու համար մղած պայքարը հանդիսանում է վորպես կուսակցության, կոմյերիտմիության, պիոներկազմակերպության, պրոֆմիութենական և պետական մարմինների կողմից յերեխաների մեջ տարած աշխատանքի կարևորագույն խնդիրը:

*Կոմյերիտմիության IX համագումարն անհրաժեշտ է համարում, վորպեսզի կոմյերիտմիության ղեկավարությամբ պիոներկազմակերպությունը գլխավորի յերեխաների մասսաների շարժումը պոլիտեխնիզմի համար, պայքարելով հետևյալ միջոցառումների շուտափույթ իրագործման համար — յերեխաների արտադրողական աշխատանքի կազմակերպում, բոլոր դպրոցների կցում ձեռնարկություններին, պայմանագրերի կնքում դպրոցների, գործարանների, կոլտնտեսությունների միջև, յերեխաների մասսաների շարժման զարգացումը հօգուտ տեխնիկայի. եքսկուրսիաներ դեպի նոր շինարարություններ, յերեխաների՝ քաղաքից կոլտնտեսություն և գյուղից—ձեռնարկություններ գնալու կազմակերպում, տեխնիկական ու գյուղատնտեսական կայանների և աշխատանքային սենյակների ցանցի ծավալում և վերակառուցում, տեխնիկական գրականության հրատարակություն, դպրոցների և ջոկատների ապահովում անհրաժեշտ սարքավորությամբ, գործիքներով և այլն և այլն:*

IV. Ընդհանուր ուսուցման, անգրագիտության վերացման, յերեխաների մասսաների կուլտուրական վերելքի և յերեխաների նյութական-կենցաղային



դրության լավացման համար մղվող պայքարի մեջ պետք է դրվեն հետևյալ խնդիրները.—

*ա). ընդհանուր ուսուցման նշանակության լայն պրոպագանդում, բոլոր յերեխաներին դպրոցների մեջ ներգրավելը, ուսուցման համար նրան նախապատրաստելը, կազմակերպելը (պատրաստական և զրո խմբակներ).*

*բ). պայքարը յոթնամյակների ցանցի լայն ծավալման համար, վորպես քաղաքում ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկական դպրոցի, վորը հանդիսանում է վորպես բազա հետագա ամբողջ զարգացման համար.*

*գ). բոլոր անգրագետ և կիսագրագետ դեռահասների կազմակերպված ուսուցման գլխավորին ընդգրկումը.*

*դ). բոլոր սովորողներին մինչև ուսուցման վերջը դպրոցներին ամրացնելը, դասարանում յերկրորդ տարին մնալը լիակատար լիկվիդացիայի յենթարկելը,* յերեխաների չքավորագույն մասսաներին նյութական օգնությամբ և ուսումնական պիտույքներով ապահովելը.

*ե). յերեխաների հասարակական դաստիարակության և մանկանների վերակառուցման, մանկական հանրակացարանների, պարտեզների, սենյակների, ճաշարանների կազմակերպման ու յերեխաների միջոցով մեր ազդեցությունը ընտանիքի վրա ընդարձակելու համար մղվող պայքարի ուժեղացում.*

*զ). յերեխաների մեջ տարվող ամբողջ առողջապահական աշխատանքը միասնական սիստեմի բերել, բարձրացնելով պետական օրգանների պատասխանատվությունը յերեխաների առողջապահական գործի համար*

և մաքսիմալ չափով լայնացնելով ու ամրացնելով առողջապահական-դաստիարակչական մասսայական աշխատանքի իրենց արդարացրած ձևերը (պիոներական լագերներ, հրապարակներ, միօրյա հանգստի մանկական քաղաքներ և այլն).

ե). արտադպրոցական աշխատանքի բոլոր տեսակների և յերեխաների կուլտուր-կենցաղային պահանջների ապահովման հիմնարկների ծավալումը:

V. Յերեխաների ազգային-կուլտուրական և սոցիալական շինարարության համար մղվող պայքարին հաղորդակից անելն ու պիոներջոկատների ու դպրոցների ինտերնացիոնալ ամբողջ աշխատանքի ուժեղացումը պիտի դառնան դպրոցի և պիոներ-ջոկատի դաստիարակչական ամբողջ աշխատանքի կարևորագույն բովանդակությունը:

Ազգային շինարարության բնագավառում կոմյերիտմիության, պիոներկազմակերպության և դպրոցի ուշադրությունը պիտի կենտրոնացված լինի հետևյալ կոնկրետ խնդիրների վրա.—

ա). յերեխաների մասսաներին բուն իրենց ուժերի տվյալ ազգային մարզի կամ շրջանի տնտեսական շինարարության կարևորագույն բնագավառների աշխատանքների մասնակցության մեջ ներգրավելու վրա.

բ). դաստիարակությունն ու կրթությունը, մասնավորապես ընդհանուր ուսուցումը, ազգային լեզվով անցկացնելու վրա.

գ). յերեխաների մասսաների մեջ պրոլետարական ազգային կուլտուրայի ստեղծման և առաջշարժման համար մղվող պայքարի վրա, յերեխաների համար պրո-



լետարական-ազգային գեղարվեստի շինարարության վրա.

զ). կենցաղային հին սովորույթների դեմ և կենցաղի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի վրա:

Բոլոր այս խնդիրները պիտի մտնեն ոչ միայն ազգային մարզերի կոմյերիտմիության և պիոներկազմակերպությունների, այլև Միության բոլոր կազմակերպությունների առօրյա աշխատանքի պրակտիկայի մեջ, դրանով իսկ նպաստելով յերեխաների մասսաների ինտերնացիոնալ դաստիարակմանը (շեֆություն, պատվիրակությունների փոխանակություն, գրականության առաքում և այլն), հաղորդակից անելով այդ մասսաներին միջազգային հեղափոխական շարժման խնդիրներին և յերեխաների մեջ դաստիարակելով դասակարգային ինտերնացիոնալ համերաշխության գիտակցությունը:

IX Համագումարը հատկապես մատնացույց է անում յերեխաների մեջ հակակրոնական շարժումը զարգացնելու կարևորագույն խնդրի վրա և յերեխաների մեջ մատերիալիստական աշխարհհայացք մշակելու վրա:

VI. Խորհրդային Միության վրա ռազմական հարձակում գործելու սպառնալիքը և յերկրի պաշտպանունակության բարձրացման խնդիրները հատուկ սրությամբ առաջ են մղում յերեխաների ռազմա-քաղաքական դաստիարակության ուժեղացման և նրանց մեջ ռազմական-ֆիզկուլտ աշխատանքների լայն ծավալման անհրաժեշտությունը:

Կոմյերիտմիության կողմից ռազմա-օդային տար-

մեկի շեֆության ընդունելը պիոներ կազմակերպության վրա եվ պարտականություն է դնում՝ լայն պրոպագանդա մղել յերեխաների և մեծահասակների մասսաների մեջ այդ շեֆության գաղափարների և կոնկրետ խնդիրների համար, ոգնել կոմյերիտմիությանն այդպիսիներն իրագործելու խնդրում, ծանոթացնել յերեխաներին ավիացիոն տեխնիկային և տարածել ավիացիոն մոդելայնացումն ու պլաներիզմը պիոներ-ջոկատում, դպրոցներում և ակումբներում:

VII. Պիոներ-կազմակերպության դաստիարակչական ամբողջ աշխատանքի հաջողության հիմնական պայմանը պիտի դառնա այդ աշխատանքի վորակի վճռական բարելավումը:

Վորակի լավացումն առաջին հերթին պետք է ընթանա ինչպես յերեխաներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ժխտողական տենդենցների դեմ պայքարելու գծով, այնպես էլ մեծահասակների կազմակերպությունների աշխատանքի ձևերն ու մեթոդները մանկական միջավայրը մեխանիկորեն փոխադրելու դեմ ամենավճռական պայքար մղելու գծով, ջոկատի պրակտիկ գործունեյությունը շինարարության ընդհանուր խնդիրներից զատելու հետ մեկտեղ, ծավալելով կուլտուր-մասսայական պրոպագանդիստական գեղազարդող աշխատանք, կազմակերպելով յերեխաների պահանջներն ու շահերը կոմունիստական ուղղությամբ:

Պիոներ-կազմակերպության աշխատանքի ամբողջ սիստեմի վերակառուցումը, նրա հարմարեցումը նոր խնդիրներին պետք է ապահովեն ամբողջ աշխատանքի նաև վորակի բարձրացումը:

Պիոներական աշխատանքի բովանդակության բնա-



գավառում պետք է սահմանված լինի վորոշ սիստեմ, վորը հիմնականում պետք է հանգի այն բանին, թե ամբողջ կազմակերպությանն առաջադրվում են հիմնական խնդիրներ, աշխատանքի հիմնական բնագավառներ պետական առաջադրությունների միջոցով և սոցմրցության պայմանագրեր տնտեսական և կուլտուրական հիմնարկությունների հետ (Հողժողկոմատի հետ, Փոստհեռժողկոմատի հետ և այլն), և յուրաքանչյուր ջոկատ, ներգրավելով իր մեջ դպրոցը և անկազմակերպ յերեխաների ամբողջ մասսան, առաջադրում է հանդիպական պայմանագրեր, վորոնք հանդիսանում են աշխատանքի ամբողջ բովանդակության առանցքը վորոշ ժամանակաշրջանի համար:

Կազմկերպչական ձևերի բնագավառում վերակառուցումը պիտի տեղի ունենա այն հաշվով, վորպեսզի ողակները դառնան ջոկատների հիմնական աշխատող բջիջներ, ստեղծված՝ իրենց իսկ յերեխաների կողմից ընտրված աշխատանքի բնագավառի հիման վրա: Յուրաքանչյուր ողակ պիտի աշխատի հարվածայնության սկզբունքի համաձայն և ճիշտ կազմակերպված սոցմրցակցության հիման վրա, ջոկելով իր կազմից վորոշ կոնկրետ աշխատանքների համար բրիգադաներ, վորպես մանկական կարճատև կոլեկտիվներ:

VIII. Պիոներ-աշխատանքի վորակի բարձրացման վորոշիչ պայմանը պիտի լինի ղեկավար կադրերի կազմի վճռական բարելավումը, մանավանդ շրջաններում, և նրանց վորակն ամեն կերպ բարձրացնելը: Համագումարը պարտավորեցնում է ԿԿ-ին և տեղական բոլոր կազմակերպություններին ապահովել բոլոր պիոներ-ջոկատներն ու հոկտեմբերիկների խմբակները մարզված

կոմյերիտականների կադրերով (առավելապես բանվորական և կոլտնտեսական յերիտասարդությունից) և կարգավորել նրանց սիստեմատիկ պատրաստությունը (սեմինարների, դասընթացների և հեռակա ուսուցման միջոցով): Համագումարն անհրաժեշտ է համարում կազմակերպության գյուղական մասի ամրապընդումը և հանձնարարում է ԿԿ-ին անցկացնել համապատասխան միջոցառումներ:

Համագումարն ուշադրություն է դարձնում այն բանին, վոր անհրաժեշտ է հիմնական մանկավարժական կադրերին ավելի մեծ չափով գրավել պիոներ-շարժման ակտիվ մասնակցելու գործի մեջ: Պրոլետարիատի կողմից անցկացվող սոցիալիստական ծավալուն հարձակումը, յերկրում տեղի ունեցող դասակարգային հակասությունների սրումը, վորն իր արտացոլումն է գտնում նաև դպրոցի ամբողջ ամենօրյա աշխատանքի մեջ, պահանջում է դասակարգային մաքսիմալ հստակ գիծ՝ յուրաքանչյուր դպրոցական աշխատավորի աշխատանքի մեջ:

Մենք պետք է ստուգենք մեր ուսուցչության աշխատանքների սոցիալ-դասակարգային աշխատանքի ուղղությունը և վորոշենք թե ի՞նչ չափով է կարողանալու ուսուցիչը «դասավանդողից» իրոք փոխարկվել յերեխաների կազմակերպողի և յերեխաներին կոմունիստական դաստիարակություն տվող աշխատավորի: Միաժամանակ կոմյերիտմիությունը պետք է սիստեմատիկորեն լրացնի մանկավարժական կադրերը, օգտագործելով պիոներ-շարժման աշխատավորներին դաստիարակության պետական սիստեմն ամրապնդելու համար:



IX Համագումարը ժխտում է ջոկատը դպրոց փոխադրելու «թեորիան», վորը եյապես ուղղված է պիոներ-կազմակերպության քաղաքական դերը դպրոցական աշխատանքի շրջանակներով սահմանափակելու կողմը, ժխտում է նաև դպրոցի կողմից պիոներական աշխատանքի ամբողջ բովանդակությունը կլանելու, դպրոցի հետ ձուլվելու «թեորիաները» և անհրաժեշտ է համարում, բոլոր դպրոցներն արտադրության հետ կապելու համակցությամբ, ջոկատների և դպրոցների կազմակերպչական վերահամալրում կատարել այն հաշվով, վոր մի դպրոցի, գործարանի, կոլտնտեսության, խորհտնտեսության պիոներները լինեն հենց նույն գործարանի, կոլտնտեսության և այլն կից ջոկատների (բազայի) մեջ, այդպիսով իսկ լիկվիդացիայի յենթարկելով այդ դպրոցներում փորպոստերը և հանձնելով նրանց ֆունկցիաները տվյալ ձեռնարկության պիոներ-ջոկատին (բազային):

X. Համագումարն ընդգծում է պիոներ շարժման թեորիայի պրակտիկայից յետ մնալը, պիոներ-աշխատանքի ամբողջ փորձի վո՛չ բավարար չափով ընդհանրացումը: Համագումարը միանգամայն անբարեհաջող է համարում մանկական-կոմյերիտական շարժման բնագավառում գիտական կադրեր պատրաստելու գործի դրությունը թե կենտրոնում և թե տեղերում և հանձնարարում է ԿԿ-ին բոլոր միջոցները ձեռք առնել այս աշխատանքը մաքսիմալ չափով ծավալելու Կրուպսկայայի անվան АКВ-ի, գիտական-հետազոտական ինստիտուտների միջոցով և 1931 թվին ստեղծել հատուկ ինստիտուտ մանկական կոմյերիտական շարժման համար:

XI Համագումարն անհրաժեշտ է համարում կառավարական օրգանների ուշադրությունը դարձնել հետևյալ խնդիրների վրա.—

ա) յերեխաների տնամարմինների ոպերատիվ և պլանային ամբողջ գործունեության մեջ ներգրավելու կարևորությունը, ամեն կերպ զարգացնելով պետկազմակերպությունների կողմից յերեխաներին պետական աջակցություններ տալու պրակտիկան.

բ) ապահովել յերեխաների կուլտուր-կենցաղային սպասարկման պլանների մշակումը Պետպլանների կողմից, մտցնելով այդ պլանները տնտեսական և կուլտուրական շինարարության ընդհանուր պլանների մեջ:

XII. Համագումարը բոլոր կոմյերիտական և կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը դարձնում է յերեխաներին սոցմրցակցության մասսայական շարժման մեջ ներգրավելու կարևորագույն խնդրի վրա, վորովխի շարժումն ավելի և ավելի յեն ընդգրկում պիոներ-ջոկատները և մասսայական բարձր դպրոցների ամբողջ ցանցը, ամենասերտ կերպով կապելով այդ ցանցը բանվոր դասակարգի մարտական խնդիրների հետ ամբողջ փրոնտով ծավալված սոցիալիստական հարձակման ժամանակաշրջանում:

Սոցիալիստական ծավալուն հարձակման պայմաններում կոմունիստական դաստիարակության սկզբունքների հետագա իրականացման և պիոներ շարժման փորձը դաստիարակության պետական ամբողջ սիստեմի վրա փոխադրելու համար մղվող պայքարը պահանջում է բարձրացնել բանվորներերի և բանվորուհիների, կոլտնտեսականների, կոմունիստների, կոմյերիտականների կուլտուրական և տեխնիկական ուժերի կամավորական շարժումը (կուլտարշավների, կուլտէստաֆետների և



այլն միջոցով) հօգուտ՝ կոմունիստական դաստիարակության, պիոներ-շարժմանն ու դպրոցին աջակցելու գիտելիքներն ու փորձն աճող սերնդին հաղորդելու գործի:

Գլխավորելով աշխատավորների յերեխաների լայն մասսաներին, պիոներական կազմակերպությունը, կուսակցության և կոմյերիտմիության ղեկավարությամբ, պարտավոր է իր ամբողջ յեռանդը, ամբողջ աշխատանքը հատկացնել սոցիալիստական շինարարության ամբողջ ֆրոնտով հաղթականորեն արշավելու գործին, կապիտալիզմի արմատների մնացորդները արմատահան անելու գործին, դարձնելով իր շարքերում աննկուն և դասակարգայնորեն կայուն բոլշևիկներ, վորոնց վիճակված է կառուցվող սոցիալիզմը վերջնականորեն ի կատար ածել:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0187265

ԳԻՆԸ 25 ԿՈՊ (3 1/8 մ.)

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

РЕЗОЛЮЦИИ
ДЕВЯТОГО ВСЕСОЮЗНОГО
С'ЕЗДА ВЛКСМ

Госиздат ССР Армении
Эривань—1931